



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ՏԵՍՈՒԹԻՒՆ	Կաթողիկոսական խնդիրը	
ՊԱՏՄԱԿԱՆ	Նախնի Արուեստներ և Զրադաշտի կրօնքն.....	
ՎԷՊ	Ոսկեղէն դաւաթ. Չինական Պատմութիւն մը. (Թարգմ. Անդրեասէն)	
ԲԱՆԱՄՏԵՂԾԱԿԱՆ	Ղուկիւնոս երգչի Կարնեցւոյ (Ա. Կէօնիւի եղնկը)	ԲԱԶՄԱՎԷՊ
ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ	Յորենի գինն ի Կ. Պոլիս (Առեւտր. Սենեկի Լրագիր)	Յ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ
ԲՆԱԳԻՏԱԿԱՆ	Հեղուկ Օդ	
ԶԱՆԱԶԱՆՔ	Աշխարհի Լրագիրներն	
ՄԵՏԵՕՐԱԲԱՆԱԿԱՆ	Երկրագնդի բեւեռ. մասերու բարեխառնութիւնը	ՍԻԷԼ Է ԹԷՈ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	Հ. Այաքնեանի մի բանասիրական գնահատութիւնը	
ՔԱՂԱՒԻՇ ՇԱԲ. ԼՐՈՑ	Արտաքին, Ներքին, Ազգային	
ՍԻՄՕՆԷՆ ԵՒ ՄԱՐԻ	(Կղապիէ տը Մոնթէքէն) Թարգմ	Մ. ԶՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս	տարեկան	Կէս ոսկի Օսման .
»	վեցամսեայ	Քառ » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դահ. արծաթ
Մէկ թերթին Գինն է	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրուած իւր կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
Ղալաթիա, Նորաստիկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՊԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՐ

ԻՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 4 Հոկտեմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

Քամի-Լանարայի վրայ պանքայի	408 7/8
3 » » » (վճռակն)	408 1/2
3 » Բարի » (պանքայի)	23 15
3 » » » (վճռակն)	23 25

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Բոնուլիտե

Գահեկան

Երեկ երեկոյ քոյ. (Միաց. D. Սէրի Գ. Կ.)	44 35
Պորային քոյուէլէն վերջը »	44 26
Բերայի մէջ	— —
Առաւօտուն բացուեցաւ »	44 30
Բարձրագոյն քիւն »	44 34
Նոսալագոյն »	44 30
Կէս օրին	44 31
Կոնստանթնուլի (1858) A. Սէրի Գ. Կ.	24 20
» (1862)	— —
» (1860)	— —
» (1863) B. »	44 30
» (1872)	— —
» (1865)	— —
» (1869) C. »	44 28
» (1873)	— —

Իւնիֆիէ Եգիպտական

Երեկ երեկոյն քոյուէլէն	69 35
Այս առաւ քոյուէլէն Գ. Կ.	70
Կէս օրին	70 5

ԲԱԺՆԵՏՈՐՄԻՔ

Սօսիթէ Ժէնէրալ	Գ. Կ. Սէրի Գ. Կ. 3 4
Քրէտի Ժէնէրալ	» » Օսմ. » 6 5
Պանք ալ Գոնս	» » » » —
Սոս. Շանթ է Վալէօր	» » » » —
Թրամուէյ	» » » » 277 1/2
Բուսէլիի երկաթուղի	Փր. 34
Օպիկանիօն ալ Բրօքսիթէ	» —
Բաժնեթուղթ Լաւրիօմի	» 58

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	դր. ... 400
Օ Ֆրանքոնց	» ... 87 33
Անգլիական ոսկի	» ... 440 42
Բոլ իմբէրիալ	» ... 90 45
Քրիմից	» ... 51 45
Իսլապիլի թղթագրամ	» ... 9 22
» արծաթ	» ... 89 20
Ֆիօրին	» ... 8 32
Մէճ. արծ. (տարբ.)	» ... 408 2
Վեցնոց	» ... 402 30
Հինգնոց	» ... 402 25

Մէթալիք	» ... 97 30
Պղինձ	» ... —
Թղթագրամ	» ... —

ԵՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 15 Հոկտեմբեր, ժամ 5 վայր. 15 Երեկոյ

Ֆէր. քոնսոլիտէ	400 1/8
Օսմ. » Սէրի Գ. բացուեցաւ	43 3/4
» » » քոյուէլէն	43 1/2
» » » Կ.	24 1/2
» » » Բ.	44 1/2
» » » Գ.	43 1/2

Օթօման 1871	65
Փոխառութիւն 1877	76
Պանք Օթօման	9
Ռուսական փոխառ. 1873	93 1/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	63 3/8
» առանձն. (Բրիտիշ Էսթէ)	84 3/8
Տարրա Սանիէ	59
Տօմանիալ (փոխառ. Բօշիլտ)	85 3/4
Հունգարական պարտութուղթ 40/0	— —
Կոնստանթնուլի Բարիքի վրայ	— —

Վիեննա, 15 Հոկտեմբեր, ժամ 4 Երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ	426 40
Օսմանեան երկաթուղի	46 70

Բարիզ, 15 Հոկտեմբեր, ժամ 3 վայր. 45 Երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	408 55
» » 3 0/0	79 05
Օսմանեան քոնսոլիտէ Սէրի Գ. բացուեցաւ	43 72 1/2
» » » քոյուէլէն	43 60
» » Սէրի Բ.	44 —
» » » Գ.	43 50
Օսմանեան երկաթուղի	34 42 1/2
» Բէժիի բաժնեթուղթ	— —

Պանք Օթօման	480
Գրէտի Լիօն	522 50
» Ֆոնսիէ	4268 75
Բաժնետոմս Լիօնի	4230
Սուէզի ջրանցք	4966 25
Ռուսական 5 0/0 1877ի	99 1/4
Իտալական Ռանթ	94 40
Եգիպտական միացեալ	321 25
Սպանիական (արտաքին)	56 1/8
Բրիտիշ Էսթէ (Բիւրք)	337 50
5 0/0 Հելլենական	270
Չէք Լանարայի վրայ	25 24

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 15 Հոկտեմբեր, ժ. 40 վ. 30 Երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	408 70
Օսմանեան քոնսոլիտէ Սէրի Գ.	43 72 1/2
Եգիպտական	322 50

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34-րդ ՏԱՐԻ

1885 ՀՈԿՏԵՄԲԵՐ 5

ԹԻԻ 3790

ԿՈՍՏԱՆԴՆՈՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 5 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Տաճկահայոցս կողմանէ տակաւին պաշտօնապէս ոչինչ որոշուած է Մակար Կաթողիկոսի մասին մեր բռնելիք ընթացքին նկատմամբ: Երկու ամիսն անցաւ Երկրորդ Ընտրելոյն կաթողիկոսացումն եւ մեր Ազգային իշխանութիւնք դեռ կը վիճին կամ լաւ եւս դեռ սխալ վիճին թէ ընդունինք թէ ոչ, եւ կամ թէ ինչպէ՞ս ընդունինք կամ ինչպէ՞ս չընդունինք այս ընտրութիւնը:

Հակառակ Ազգային Ժողովոյ կողմանէ տրուած հրահանգին, հակառակ Ս. Պատրիարք Հօր բացարձակ յայտարարութեան թէ՛ նմանօրինակ խնդիր մը երկարել եւ ընդփոյթ չլուծեն Ազգին չահուց զնասակար է՝ Կաթողիկոսական Յանձնաժողովն տակաւին չկրցաւ յանդիլ համաձայնութեան մը եւ ահա՛ այս ուրբաթ Ազգային Ժողով չը գումարիր եւ ո՛ր գիտէ թէ յառաջիկային կաբելի պիտի լինի՞ գումարել:

Բնականաբար մեր հակակարծիք չեմք կաթողիկոսական խնդիրն Ազգային Ժողովոյ կողմանէ մասնաւոր յանձնաժողովոյ մը յանձնուելուն, բայց որքան պարզամիտ ալ ըլլանք, չէ կարելի չ'զգալ թէ դիւրին չէ համայնութիւն գոյացած ենթադրելով իսկ, ոչ որ կրնայ ասպնջութիւն վիճաբանութիւնն աւելի քերձ, աւելի բուռն եւ աւելի երկար ջըլայ Ազգային Ժողովոյ յառաջիկայ նստին մէջ, Կանոնաւոր նստի մը համար ամեն

խոստում, ամեն նախահոգ կարգադրութիւնք, գրգռիչ խօսքով մը, ընդ միջմամբ մը, բառով մը կրնան վայրկեանի մը մէջ փրճանալ եւ կիրքերն աւելի բուռն կերպիւ բաղխիլ ու ծանրալիւ հետեւանքներ ունենալ:

Եւ այս ամենն ինչո՞ւ համար:

Ոմանք կ'ըսեն սկզբունքի խնդրոյ մը համար. այլ կ'ըսեն անձի խնդրոյ մը համար, ամենքն կ'ըսեն ազգային իրաւանց պահպանութեան համար:

Սակայն այս ամեն պատճառներն ազգօգուտ ըլլալէ յոյժ տարբեր արդիւնք պիտի յառաջ բերեն: Մեր Երեսփոխանք, որոց յանձնուած է Ազգային իրաւանց պաշտպանութիւնը, թո՛ղ չմոռնան թէ համաձայն են մի կէտի վրայ, այն է թէ իրենց ընտրելաց ցանկէն դուրս մի Եպիսկոպոս Կաթողիկոս ըլլալով, ոչ մին կրնայ ուրախութեամբ եւ հանդարտ սրտիւ ընդունիլ զՄակար Կաթողիկոս եւ ա՛յս է կարեւորը:

Բայց միւս կողմանէ, Ազգին չահերն եւս, անցեալն ու ներկայն չեն ներեր որ եւ ոչ մի Երեսփոխան համարձակի հանդարտ խըղճիւ մերժել զՄակար Կաթողիկոս: Ամենէն մեծ ազգեր, որք ի հարկին զինու զօրութեամբ կարող են իրաւունքնին պաշտպանել՝ կատարեալ իրողութեան առջեւ պարագայից կը համակերպեն իրենց քաղաքականութիւնն. օրինակները դիւրին է գտնել: Եւ մեզ համար կաթողիկոսական ընտրութիւնն կատարեալ իրողութիւն մ'է, թէեւ ոմանց համար անսկզկալ, բայց օրինաւոր է եւ վերսկսին անկարելի. ուրեմն ոչինչ կը մնայ ընել ազգասէրին համար, եթէ ոչ անցեալն ընդունիլ, օգտուիլ այս դասէն եւ ապագային աւելի շրջահայեաց լինիլ:

Վերջին խօսք մը : Եթէ Ազգային երեսփոխանը կատարեալ խղճի մտօք կ'ուզեն դործել, թող անգամ մը լաւ յիշեն թէ իրենք Ազգին կողմանէ ընտրեալ են, թէ իրենք Ազգին ներկայացուցիչներն են եւ իբր այս թո՛ղ լաւ մը ուսումնասիրեն իրենց ընտրողաց կարծիքն այս խնդրոյ նկատմամբ, ինչպէս սովոր է խորհրդարանական ազգաց մէջ : Անտարակոյս զիւրաւ պիտի տեսնեն թէ Հայ ժողովուրդը բոլորովին հեռի է յուզեալ եւ խառնաշփոթ վիճակ մը փափագելէ, թէ ժողովուրդն երբէք չմտածեր այն ծայրայեղ միջոցներուն որոց զիմուիլը խորհուրի թերեւս եւ որոց միասնեան յայտնի կը տեսնէ, եւ եթէ խնդիրը դայ յանգի Ազգային ժողովոյ կողմանէ այս ընտրութեան Դժգոհութեամբ կամ Գոհութեամբ ընդունուեն՝ այն ատեն մեր ընթերցողաց կը թուողնք դատել թէ Ազգային Հիմնական Շահերն, Հինաւուրց Աւանդութիւններն եւ որքան զիւրաւ բացատրութեանց նուրբ ձեւերով կրնան հիմնիվայր տալալի կամ անխախտ եւ անսասան մնալ յյաւիտեան :

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՆԱԽԵԻ ԱՐՈՒԵՍՏՆԵՐ

ԵՒ

ՁՐԱԳԱՇՏԻ ԿՐՈՆՔՆ

Smith-Storia antica dell'Oriente. pagina 439

1. Մարա-Պարսից տեղի ի պատմութեան — 2. Երկուքն ալ Արիական ցեղի ճիւղերն էին — 3. Իրենց բնակավայրն րանու բարձրաւանդակն էր : Անոնց երկու ճիւղերն, Արեք, Յաւանք — 4. Անոնց նախնական վիճակին վրայ լեզուախօսութենէն տուած վկայութիւն — 5. Անոնց ընկերական կեանքն եւ բարոյական ու քաղաքական վիճակն — 6. Արիական նախնի կրօնքն : Անոր յերկաստուած կրօնս եւ ի համայնաստուածս բնապաշտութիւն յեղաշրջին : — Տեղեւորագրութիւն : Ձրհեղեղի աւանդութիւն :

1. Յարեթեան ցեղն աճմամբ եւ աշխարհակալութեամբ ճոխացած, կը սխիւղբամ իրեն « Էաուայ » ընել եւ « ի տան Սեմայ բնակիլ » : Նախնի ցեղերն երկու մեծ եւ արդաւանդ տափարակաց մէջ բնակե-

լով՝ որք քիչ ժամանակի մէջ կեանք տուին ամենահին քաղաքակաշտութեան՝ հիմներ էին հզօր պետութիւններ, անդուծ բռնակալութեամբ եւ վայրագ փառաւորութեամբ զարգացուցեր էին այն արուեստներն եւ գիտութիւններն որք մարդոյն նիւթական պիտոյից ծառայէին : Բայց իրենց բռնակալութիւնը ցամքեցան եւ իրենց գիտութիւնը աւելորդ ապաշտութեան փոխուեցան : — Ազգաց միջէն ընտրեալ ազգն ալ, որուն տրուած էր պահել ճշմարիտ կրօնքն եւ կառավարութեան պարզ ձեւ մի, անհաւատարիմ մնաց, դատապարտուեցաւ ժամանակաւորապէս իւր սխալներն ուղղել զիտութեան եւ ստրկութեան խիստ խրատովն : Այս կէտին՝ երբոր ցեղն, կորովի ժողովուրդներ խիստ կլիմայից տակ եւ բարձրաւանդակաց մաքուր օդոյն մէջ ծնած, Թուրանական վաչկաբնակաց կոխներով վարձուած պատերազմի՝ եւ սաքուր ու հուգեւորական սկզբանց վրայ հիմնուած կրօնքէ մի ներշնչեալ՝ իւր համար պատրաստուած քաղաքակաշտութեան պտուղներուն տիրէ եւ միանգամայն կազմէ պետութիւն մի որ՝ աբեւտեան ազատութեան հզօրագոյն հոգիէն պիտի ընկճուէր :

2. Մարք եւ Պարսիք որոց յանձնուեցաւ այս առաւելութիւնն՝ եւ մեծ ցեղէն էին, զոր հին սովորութիւնն եւ արդի գիտութիւն միաձայն Արեւիկան կամ Արեւ անուանեն : Այս կոչումն ի ստան Պարսից՝ անտարակուսելի է : Բայց Մարաց նկատմամբ կտոր մի չիւթէ, այնու երկիրն միշտ Մարաստան կոչուած ի հին մատենագրաց՝ ամենահին ժամանակէ ի վեր իւր մէջն ունէր Թուրանական ժողովուրդ մի (կամ Սիււզական) : — Յայտնի է գիտնոց թէ Մարսիան ըսուած սխալն Պարսից թագաւորաց եռալեզու արձանագրութեանց մէջ՝ իրօք Թուրանական դաւառալեզուն մ է, զոր մենք պարզ խօսելու համար Մարա-Սիււզական կ'անուանենք : — Բայց պատմութեան Մարերն, որոնք պետութիւն հիմնեցին, որոց յաջորդ եցին Պարսիկներն, անտարակոյս Արեւ էին : « Մարք ի հնումն յամենեցունց կոչէին Արիք », ասէ Հերոդոտ (1), եւ այս անուն տան անոնց միշտ Հայ մատենագիրք : — Ազգաբանական

(1) Հերոդոտոս Է. 62.

կապ մի կար դարձեալ «Մարաց եւ Պարսից» այն անխղիւր միութեան մէջ որ առած էր Կիւրոսի ժամանակն. եւ որուն հետքը ոմանք գտնան շատ առաջ ասորնական արձանագրութեանց մէջ: — Ասոնք ունէին նոյն լեզուն, մի եւ նոյն կրօնը, նման սովորութիւններ եւ նոյնպէս հագնէին. եւ Հերոդոտ խօսելով անոնց զինուոց նոյնութեանը վրայ, խորհրդած է թէ երկուքին ալ տարազ զգեստուց աւելի Մարական է քան թէ Պարսիկ: — Թէ մի եւ նոյն կարգերն ունէին՝ վկայեալ է այս հռչակաւոր խօսքէն. «Զի մի եղծանիցի հրաման Մարաց եւ Պարսից, . . . եւ զհրաման Մարաց եւ զՊարսից չէ օրէն չըջել (Դանիէլ. Զ. 8. 12): — Իրենց ազգականութիւն մէկ կողմէն հիւսիսային Հնդկաստանի ցեղերուն հետ, եւ միւս կողմէն Եւրոպականաց հետ որ պատմութեան չարքին մէջ յետոյ երեւան ելած՝ պահանջէ որ քանի մի ընդհանուր անդեկութիւն տանք այն մեծ ցեղին վրայ, որուն մասն են դոքա:

3. Ակնարկ մի տանք աշխարհին որուն վրայ պիտի խօսինք: — Շատ անգամ խօսուած է Իրանու մեծ բարձրաւանդակի վրայ, որ տարածուի դէպի արեւմուտս Բաբելոնի եւ Ղուրիստանու լեռներէն. Տիգրիսի եւ Եփրատի ձորահովտին արեւելեան սահմանագլուխը ձեւացնելով մինչեւ Ալեքսանդրիան լեռներն, որ յարեւելս Ինտոսի հովտին ամուրքը բերեն: — Ի հարաւ սա ելլէ Հնդկային Ովկիանու եզերքներէն Պելուսիոսու (հին Կեղրոսիա) լեռնահովտներէն, եւ հիւսիսային սահմանն է Հնդկային Կաւկաս: Այս շղթային հիւսիսային հակումները յարեւմտից յարեւելս երթալով՝ զուգընթանան բարձրէն երկրի այն չոր ցամաք լեզուն որ կապից ծովուն երկայնութեան վրայ է, ապա Խիզա՛յի լայնածաւալ անապատին հետ, որ կը տարածուի ինչուան Աբու ծովը եւ Ոքսոս եւ վերջապէս լեռանց եւ հովտաց գեղեցիկ գաւառին հետ՝ որոնք ոռոգուին այս գետին վերին ընթացքէն եւ անոր օժանդակներէն որ ինչայ Ինքսուլէ (Պարսպամիսոս) եւ դէպի հիւսիս ընթացող Բաբելոն անկիւնը: — Այս աշխարհին ի հնուն՝ Բաբելոնի (1) կոչուած կամ ուրիշ մի ասոր

շատ մօտ՝ Արիական ցեղին նախնական ազգերուն աւանդութիւններն համարին իբրեւ առջին խանձարուր ցեղին եւ այն նախնի բնակութեան մէջն ալ զանազանին Աբէ+ կամ «Անդրանիկ ճիւղ» որ յարեւելս բնակեցան, եւ Յաւանք կամ «Երկրորդ ցեղն» որ յարեւմուտս բնակեցան: — Առաջինները յԱսիա բնակողաց հայրերն են, եւ լցուցին Հնդկական տան եւ Իրանու բարձրաւանդակն, մինչդեռ վերջինները դաղթեցան յարեւմուտս եւ ցրուեցան, իբրեւ մէկվմէկ կոխող ալիքներ՝ թափեցան յԵւրոպա: Իրենց սկզբնական անուն պահուած է ծննդոց Յաւան անունով, եւ Յոն յոյն անունով եւ Հնդկա — Եւրոպական ցեղին Giovanè՝ կամ այլ ուրիշ բառերու մէջ:

4. Այս լեզուախօսական ապացոյցներն մեծ լոյս ծագեն Արիական ցեղին նախնի վիճակին վրայ: Բաղդատական լեզուաբանութեամբ անսուտ կանոն է՝ եւ ինքնին յայտնի թէ բազում ազգական լեզուաց մէջ նոյն եւ նման բառեր, կամ որ աւելի վճռողական է, շատ լեզուաց բառերը տարբերք միայն յատկանիշ վերաբերին սկզբնական մայր լեզուի հասարակ ընդուն, եւ անոնց նոյնութենէն հետեւեցնենք թէ ցեղին մէջ տակաւին չբաժնուած այս բառերու նշանակած առարկաներ, սովորոյթք եւ սահմանադրութիւնք կային: Երբ օրինակի համար՝ գտնանք գլխաւոր բառեր որ հովուական կենաց պատկանին, եւ գլխաւոր ընտանի կենդանեաց անուններ, ինչպէս, եղ, ոչխար, այծ, խոզ, ձի, շուն, սագ՝ հասարակ Արիական լեզուաց, մենք հետեւեցնենք թէ նախնի Արիք հովիւ ժողովուրդ մ' էին, եւ թէ սորա պահէին եւ անուցանէին այսպիսի կենդանիներ: Ասկէց հետեւեցնենք թէ սորա կառքին լծէին ձի եւ եղ. բայց ձի հեծնալն անծանօթ էր նոցա, ինչպէս Յունաց եւ Տրոյացոց մէջ ալ դժուարաբաւար են հովերական դարուն միջոց:

Ոսկեգործութեան, արծաթագործութեան եւ պղնձագործութեան արուեստը գիտէին բայց ոչ եւ երկաթագործութիւն,

(2) Ասկէ շատ օտար չէ Խորենացւոյ աշխարհագրական սահմանն. «Աշխարհ Ասիոյ՝ Արեւ եւ, Երկն

կալով Մարաց եւ Պարսից, եւ ձգին մինչեւ ի Հնդկիս, Երբն Վրկանայ եւ մասին Սկիւթայ»: «Ասիա» . ԼԳ:

զէնքերնին փայլուն էին եւ ոչ անհարթ զանգուածներ եւ մետաղեայ զարդեր ունէին : Թէպէտ հովիւ ժողովուրդ , սակայն վազկատուն վրանաբնակ չէին , այլ հաստատուն բնակելու տեղ ունէին եւ իրենց տուներ շինէին : Երկիր բանէին , բայց միայն շատ անհարթ գործիքներով , իրենց շարունակ դաղթականութեան սլոցն՝ երկրագործութեան մէջ յաւաճողէմ ցեղերէն սորվեցան արօր գործածել , զանազան ցորենեաց եւ այլ եւ այլ արմտեաց տեսակներն մշակել , գինի եւ ձէթ հանելու արուեստն : Բաց աստի , այնչափ ցորեն մշակէին որ իրենց սննդեան բաւ էր , եւ որպէս զի զանազանուն տեղացի բնիկներէն որ երթալով յարեւմտա եւ ի հիւսիս , վայրի կաղնոյն պտղով անանէին : Ազով եփած կերակուրներ ալ ուտէին սառնք : Սկսէր էին նաւակներով դէտոց եւ լճաց վրայ բախտ փնտռել , բայց կայմ եւ առաջատա տակաւին անծանօթ էին անոնց :

5. Կարեւորագոյն եւս է լեզուաբանութեան տուած հաւաստիքն անոնց ընկերական , բարոյական եւ կրօնական նկատմամբ : Ամուսնութիւն ոչ միայն ծանօթ էր , այլ հանգիստաւոր արարողութիւններով դաշն , եւ այն նշանաւ որ իրեն գլխաւոր բնադրութիւն է եւ շատ լեզուաց մէջ ալ իւր սովորական անունը , այսինքն Եւրոպայի մէջ կամ միւսութիւն ձեռաց : Բազմակնութեամբ չէին ապականուած , եւ կնոջ հետ վարուէին այն յարգանքը որ աւանդուեցաւ ցեղին տեւտոնեան այն ճիւղէն , որ երկար առեւն պահեց իւր նախնական պարզութիւնը : — Զաւակ ունենալու լիախրա գոհութիւնը , փոխադարձ իրարու օգնելն եւ իրենց սէրն եւ իւրեանց ճարտար արդեստէն ունեցած վարձատրութիւն՝ փայլին իւրեանց բացառութեանց մէջ : Սանուկ մի է «տանողընծութեան» , «աճումն երջանկութեան» , «փարատիչ վշտաց» , աղջիկ մի «ցնծութիւն պատճառող է» , եղբայր է «հաստատիչ» , եւ քոյրն «բարի բարեկամ» , մանչն «պաշտպան եւ սնուցիչ է դերդաստանին» աղջիկն «պահապան արջառաց» «արածող կովուց» :

Ընտանեաց կազմութիւն հիմն էր այն ընդարձակ միութեան ցեղից : Գերդաստանաց , արեան մեքստոսաց , որ տեւեցին ինչուան մե

օրեր Արիական ալգաց չղթային թէ՛ արեւելեան եւ թէ՛ արեւմտեան ծայրերու մէջ . այսինքն Պարսից եւ Կելտաց մէջ : — Նահապետին , գլխոյն եւ ընտանեաց հօր իշխանութիւնն հիմնուի բնական օրէնքի մի վերայ . բայց այդ իշխանութեան չարաչար ինքնակամ գործածութիւնը ծերոց խորհրդարանէ մը կ'արգիլուէր . այդ խորհրդարան ընդհանրապէս ընտանեաց եօթն գլխաւորներէ կազմուէր : Այս նահապետաց գլուխն թագաւորն էր , որ իւր խոհմութեանն եւ արիւթեանը համար ընտրուէր : Իւր գահակալութիւն՝ որ քարի մի վրայ նստեցնելով կատարուէր՝ հաւանօրէն ի Յունաց անուամբ յիշուածն է , եւ սովորութեանց շատ յիշատակներ թէ՛ հներ եւ թէ՛ նորեր կը ցուցնեն թագադրութեան սկովտական հին քարն , որուն վրայ Անգլիացի թագաւորներ տակաւին պսակուին յիւստամիրսդր :

Թագաւորին գլխաւոր պաշտօնն էր առաջնորդել ի պատերազմ , որովհետեւ նախնի Արիք պատերազմապէս ցեղ մ'էին , եւ լեզուն իսկ հաւաստէ անոնց զինուոց եւ քանի մի պաշտպանողական զինուոց զիտութիւնը , սուր , տէգ , նիզակ եւ նետ , աղեղն , կապարճ , սաղաւարտ , վահան եւ զրահ : — Բաղաքը եւ գլխը թէեւ անկատարը , սակայն ամբացեալ . պատերազմի մէջ բռնուածներն՝ դերի էին : Թագաւորն ալ առջի գատաւորն էր . բայց իւր ոչբայարձակ դատարանէն կարելի էր բողբոքել առ դատաստանն Աստուծոյ , ինչպէս սովորութիւն էր Տեւտոններու եւ Բրիտանացւոց մէջ : Մանուկ հնդկաց հին օրէնքներն , որ անշուշտ նախնի աւանդութեանց վրայ հիմնուած են , եւ Սամայան՝ ամենահին սանսքրիտ գիւցաղներգութիւնը ակնարկէ հոյ եւ եռացեալ ջրոյ փորձը :

6. Իսկ Արեաց կրօնից մասամբ՝ բազմատական զիւցարանութեան արդի գիտութիւնը՝ առատացուց մեր տեղեկութեանց դանձը որ բղխեն հին Հնդկաց եւ Պարսից նուիրական մատեաններէն , ի վեոյից եւ Զէնդաւեստայ . բայց նիւթը շատ ընդարձակ ըլլալով՝ կարելի չէ լիովին բացատրել , մանաւանդ որ նպատակս է աւելի ի մասնաւորի Մարաց եւ Պարսից կրօնից զարգացման վրայ խօսիլ : — Իւր միստուածեան

հիմը գերադոյն էակին Դիւս, Deus, Θεός Diò անուան մէջ պահուած է, եւ այն ածականներուն մէջ որ այն հոգեղէն էութեան վկայեն, «Կենդանին» Աղհարան շնորհաց, Ահարա Իրանաց, Էշար Ետրուրացւոց, Էշար Կելտաց, Աստուած Հայոց, «Հոգին» Mania Վետայից մէջ, Mainyu Իրանաց, եւ Զարա «Հոգի աստուածային եւ յաւիտենական որ ընդմտանէ ընդ տիեզերս», Ռիկ-Վիտայի երգի մը լեզուն երաջական սաղմուսաց ոճն յիշեցնէ. — նա է միայն տէր աշխարհի, ընդ գերկինս եւ գերկիր, տայ զկեանս, զգորութիւն, այլ ամենայն ի նմանէ խնդրեն զօրհնութիւն նորա, մահ է անմահութիւն ստուեր միայն են, լերինք ձիւնապատը, ովկիանոս իւրովը ալեօք զիշխանութիւն նորա պատմեն: Ի նմանէ երկինք եւ երկիր, միջոց եւ հաստատութիւն հաստեցան կացին. նա սփռեաց զլոյս յօգո: Երկինք եւ երկիր գոգան առաջի նորա: Նա միայն է Աստուած ի վերայ ամեն աստուածոց: — Իբրեւ սովորական միաստուածութեան յեղաշրջելուն առաջին քայլն, յայտ գէտս տեսնուի Ռիկ-Վիտայի չարականի մէջ, որ ասէ թէ «իմաստունքն բաղում անուանա տան էակին որ մին է», ըստ կերպարանաց որով յայտնուի եւ նկատուի իւր երկրպագուներէն: Արեաց համայնաստուած բաղմաստուածութիւնը Նգիպտացւոց եւ Բաբելոնացւոց բաղմաստուածութենէն աւելի երկրաւոր կերպարանք մ'առաւ: Արեւէն եւ լուսնէն, երկրէն եւ երեւելի երկնքէն դուրս՝ աստուածացոյցին բնութեան զօրութիւններն, գերկիր, զօք եւ զջուր, զծառս եւ զանտառս, զաղբիւրս, զդեռտս եւ զծովս, զհողմունս, զանձրեւս, զամպս, զվիշապ ձուկն: Ինչպէս տեսնուի ի Վիտա՝ անոնց երեւակայութեան վրայ սաստիկ ազդէր բնական աշխարհի զօրութեանց անդուժակատամարտն, օրը զիշերոյ հետ կուռի, արեգակնային ճառագայթը որ երկիր ծածկող ամպոց հետ մաքանչին, փայլակն որ հարուածէ զամպն եւ արգելու անոր բեղնաւորիչ անձրեւներն, այս ամէն բաներու մէջ զոր տեսնէին՝ պատերազմի նշան մի համարէին ընդ մէջ բարոյն եւ չարին ի բարոյական աշխարհի: — Զուրկ այն գիտութենէն որ բնական զօրութեանց հաւասարակշռութիւնը սորվեցնէ, եւ զուրկ ի հա-

ւատոց յայտնութեան բարոյական աշխարհի, բայց աստուածային իմն կառավարութեան հաւատով՝ շուտով այս բոլոր հակառակներէն պիտի իյնային երկաստուած կրօնից երկարմատ վարդապետութեան մէջ որ իւր ընդարձակ զարգացումն Զրադաշտի կրօնքին մէջ ստացաւ: — Իրենց պաշտաման կարեւորագոյն տարր էր զոհն, որ նման էր սովորաբար հրէական օրինաց «պատարագ կերակրոյ եւ պատարագ ըմպելոյ», բայց հանդիսաւոր գիպաց առթի մէջ զոհի աւելի պիտէր որ ձի մ'էր ընդհանրապէս: — Նիւթական զոհն անբաժան էր աղօթից եւ երգոց պատարագէն, սուրբ խօսքէն (Vaë-Vox) ձայն, սորված, աստուածոց եւ մարդկան համար՝ գործի ամենայն իմաստութեան եւ հոգի աղբիւր, որ շնչէ իբրեւ զհողմ ընդ Ամեայն աշխարհս: — Մեծութիւն իմ, ասէ երգմի Վիտայ-Ռիկի մէջ, ի վեր է քան գերկիր եւ քան գերկինս: — Այս համայնաստուած կրօնքէն, տիեզերագիտութիւնն ելաւ որ արգէն ծանօթ է մեզ Հերոդոտէն եւ Ովեպիտէն, յորում տիեզերք սկսին թռչ—բռնէն, ոչ պարզագործութեամբ, այլ բղիմամբ: Արիական ցեղին ամենահին աւանդութեանց մէջ, Զրեգէդէն եւ Տապանին աւանդութիւնը երեւի շատ տեղ եւ շատ ձեւերով: Հաս չէ կարելի յիշատակել զստորն. բայց դիտելի է որ հնդկիկ — վիսպանութեան ջրահեղձ ընթացն Բարայան պարզութեան համար, որ է մարդկային ցեղին պարզութեանը՝ բան մի չ'ամեր մինչդեռ Դեկալիոնի ջրհեղեղին յունական վէպին մէջ այն է, ինչ որ է Սուրբ Գրոց Նոյեան ջրհեղեղին պատմութեան մէջ:

(Շարունակել)

ՈՍԿԵՂԷՆ ԳԱԻԱԹ

ՁԻՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Հետեւեալն ի Չինաստան Տիկին Աղէքսանդր Ռեւերման «Չինական քան չորս օրինակ Որդիական Բարեպաշտութեան» անուն գրքէն անգլիարէնի թարգմանելով՝ յԱնգլիա՝ յՕգոստոս, չինագէտ Փրօֆեսոր Լէկկին յղած է: Եւ անկէ մեծ ընդունելութիւն գտնելով նորա հարազատ թարգմանութիւնը, անդաւիարէն մի ուսումնական թերթի մէջ հրատարակ-

ուած է, յորմէ մեք եւս հայերէնի թարգմանելով « Մասիս » ի պատուարժան ընթերցողաց կը ներկայացունենք :

Շանկ-Թունկ գաւառին մէջ չինական ազգատոհմ մը կը բնակէր, որոյ անունն էր Ուանկ : Նոյա կը կազմէին յոյժ մեծ գերդաստան մը, յորոց երիցագոյնը՝ Ուանկ-Շին-Սանկ, ունէր չորս որդի : Սոյն որդւոց իւրաքանչիւրն ունէր կին եւ ընտանիք, բոլորն ալ մի եւ նոյն յարկի տակ կը բնակէին : Բանդի Չինաց պարծեցեալ Նահապետական դուրժեամբ որդին միայն գաւառի մէջ իւր տան մէջ ծնողաց կենդանութեան ժամանակ : Նա կը փոխադրէ իւր ամուսնոյն բնակարանը իւր հօրը տունն եւ կինն եւ կըլլայ գաւառի գերդաստանի : Սոյն օրինաց պատճառաւ բոլոր հօրեղբորորդիք ի միասին կը բնակէին, կը խաղային, եւ կը կուռէին, ինչպէս տղայք կ'ընեն : Սակայն նոքա զիրար եղբայր կը կոչէին, եւ օտարական մը անդ այցելելով դժուարութեամբ կրնար որոշել ճշմարիտ եղբարքն :

Երիցագոյն որդին՝ Ուանկ-Կոհ-Կոհ, շատ ծոյլ, եւ մօլի էր զրամբանդութեան : Նա երբեք ստակ չէր շահեր, եւ հոգ չէր ընել օգնելու մշակել այն մեծ աղարակն, ուրտեղ իւր երեք կրտսեր եղբարք ամենայն ժրջանութեամբ կը գործէին : Կոհ-Կոհի կինն եւս յոյժ ժրջան էր, եւ խիստ կ'աշխատէր ուղղել իւր էրկան ծոյլ բնաւորութիւնը : Կերակուր կ'եփէր, կտաւ կը ներկէր, զանկապաններ, վերարկուներ, տառապոկներ կը շինէր, բամբակ կը մանէր, եւ իւրեանց տան մօտ եղած ծխախոտի արտին հոգ կը տանէր : Սոյն կինը որդի մը ունէր՝ Շինկ-Փինկ կամ « Խաղաղ-Սիրտ » անուն, եւ փոքրիկ կաթնկեր տղայ մը Շինկ-Քենկ կամ « Խաղաղ-Գէտ » կոչուած : Միւս բոլոր որդիքը մեռած էին ծաղկի հիւանդութեամբ : Եունկ-Յունկ կամ « Յաւախտեան Գարուն » իւր որդեկաց մեծ խնամ կը տանէր : Նա կը ջանար իւր երիցագոյն որդին ընել ժրջան եւ մեծարեւիտ առ հաւս իւր : Եւ շատ կը ցանկար զրկել զնա դպրոց իւր հօրեղբորորդւոց հետ : Բայց այս անկարելի էր, զի նորա հայրը չունէր ստակ վճարելու վարժապետին : Կոհ-Կոհ շարունակ կը յաճախէր նորա խաղցող չար

մարդոց հետ, եւ մեծ շտապով կ'ործանում կ'սպառնար ամբողջ գերդաստանին : Մինչեւ անգամ սորվեցաւ գողնալ, եւ շատ կերպերով շրինադանց գտնուեցաւ :

Երբունին Ուանկ-Շին-Սանկ յաճախ ի խորհուրդ կը կոչէր իւր եղբարքը եւ նոցա որդիքը, խօսիլ նիւթոց վրայ եւ հնարել միջոցներ Կոհ-Կոհի անառակութիւնըն զրուպելու : Որչափ որ կրցան ամեն միջոց խորհեցան եւ փորձեցին, յուսալով նորա չար բնաւորութիւններէն բուժել զնա : Ստակ տալով անոր, զրկեցին զայն հնդկական նաւակով մը ի Մանչուրիա : Վատահելով որ այդ հեռաւոր տեղը նոր բարեկամներ ստանալով զրամբանդութիւնն ու գողութիւնը պիտի թողու : Իսկ նա մի քանի չարաթէն մերկ, միմիայն մէկ չնչին, նուրբ եւ հինցած հանդերձով վերադարձաւ, իւր բոլոր ստակը վատնած : Տակաւին մեծ փորձութիւն մ'էր իւր պանծալի գերդաստանին : զի մարդիկ չարունակ իւր խեղճ ծեր հօրը քով կուգային պահանջել ի Մանչուրիա պայմանաժամ վ առած պարտքը : Ի՞նչ կրնային ընել զայն զսպելու : Ամբողջ օրը իւր բթամատները կապուած կը մնային ի պատիժ եւ ի խրատ իւր գողութեանց : Ուրիշ շատ մեթոտներ որ ի Չինաստան ազդու կը համարուէին զմարդիկ բժշկել ի չարութենէ, յարգուեցան իւր հօրեղբայրներէն եւ փորձուեցան բայց ի զուր :

Եունկ-Յունկ գիտէր, թէ իւր ամուսնոյն հայրն եւ հօրեղբարքը խիստ աշխատանք յանձն առած էին ուղղել զԿոհ-Կոհ : Նա գիտէր, թէ նոքա յուսահատած էին զնա երբէք բարի եւ օգտակար մարդ ընելէ : Արդ՝ երբ նորա հայրն ու հօրեղբարքը ժողովուած էին ի խորհրդածութիւն, ստոյգ զգաց, թէ բաներն խիստ ծանր երեւոյթ կ'առնուին : Ուանկ-Շին-Սանկ եւ իւր եղբարքը, ընտանեկան գործերը միշտ կը քննէին մեծ գրատան մէջ : Եունկ-Յունկ մագլցի ելաւ փայտեայ դէղի մը վրայ, որ այս մեծ սրահին ետեւ կուտուած էր : Սոյն ընդարձակ սենեկին կեղծոնը կը կենար Կոհ-Կոհի հաւուն անթաղ դագաղն : Նորա վրայ կար կապոյտ մետաքս նսկով ճոխագոյնս անդնադ ործեալ ծածկոց մը : Սոս դագաղը տասն եւ վեց տարիէ հետէ կը մնար, ըսպասելով այն ժամուն, երբ գերդաստանը

բաւական հարստանալով պիտի կարողանար հանգուցելոյն ամենալքեղ թաղման հանդէս մը տալ։ Սոյն դադաղին համար շատ անդամ բողբոջած էր ի տնօրինութիւն Կոհ-Կոհին եղած ձեռնարկութեանց մէջ։ Քանզի, կ'ըսէր նորա հայրը, եթէ այս չարագուշակ դրամախաղութեան աւերումը չարունակուի, անդ՝ երկրորդ դադաղ մ'եւս պիտի աւելնայ, մինչդեռ մենք առաջին նշանաւոր դիակն ըստ արժանւոյն թաղելու կարողութիւն չունինք։ Զայս կ'ըսէր իւր սիրտն բաղխելով, ցուցունելով թէ բուն իւր մահն ըսել կ'ուզէր։— Այո՛, այո՛, այո՛, յաջորդաբար կրկնեցի։ Իւր եղբարց իւրաքանչիւրն։ Նոյն միջոցին խղճալին Եունկ-Յունուն տանեաց փոքրիկ երգիքներուն խիստ մօտ նըստած կրնար լսել նոցա բոլոր խորհրդածութիւնքը։ Նորա սաստկագոյն երկիւղներն իրականացած էին։ Նա գտաւ, թէ սոյն ժողովներն կ'ըլլային իւր անպէտ էրիկէն ազատելու լաւագոյն կերպ մը խորհելու։ Իրեւելին, այսպիսի անձի մը տանը մէջ իւր ունեցած գիրքն խիստ ծանր էր։ Բայց տակաւին աւելի տաժանելի պիտի ըլլար, երբ այդպիսի վատանուն բնաւորութեան մը որբեւարին լինէր։ Նա կը լսէր, թէ բոլորն ալ կ'ըսէին. «Նա անսխիտան է եւ պէտք է ըստպաննել զնա»։ Կը խօսէին դնել նորա պարանոցը մեծ յարգահատանին տակ եւ գըլխատել զնա ցորենի կալին վրայ. կը խօսէին երկայն բեւեռներ մխել նորա աչաց մէջ այնքան խոր, մինչեւ սպաննել զնա. կ'առաջարկէին ծովէն տանել զնա եւ փրկալով մը փաթկնելով, նաւակէ մը ծովածոցն ձգել։ Վերջապէս միմիայն սոյն որոշման եկան, թէ գերդաստանի պատուոյ համար մեռնի պիտի։ Եունկ-Յունուն սիրտը տակաւին կը սոսկար երբ կը լսէր սոյն բոլոր առաջարկութիւնքն։ Նա չմեղադրեց իւր կեսրայրն եւ ոչ ալ զայն անգութ եւ անըզգայ համարեց։ Նա դիտէր, թէ ըստ Զինաստանի օրինաց՝ կեանքն ու մահը գերդաստանի գլխաւորին ձեռքն էր, որ երբ ակներեւ եղաւ, թէ Կոհ-Կոհին ապրիլն վաճելու չէր, բոլորովին արժանաւոր էր ըստպաննել զայն եւ այսպիսի անպիտանէ մը ազատել զաշխարհ։

Եունկ-Յունուն աւելի մեռեալ քան կենդանի թառէն վար իջնելով զնաց փնտռել

իւր որդին՝ զՇինկ-Փինկ, որ այժմ տան եւ ութ տարեկան բարձրահասակ կտրիճ երիտասարդ մ'էր։ Իւր բոլոր լսածն անոր պատմեց։ Խակոյն տղան ըսաւ. «Մայր, եկ ամենքս տարաշխարհէնք, զի ալ չենք կրնար առաւել թշուառանալ. ո՛հ, մայր իմ, ի՞նչ սոսկալի կեանք պիտի ունենաս. եթէ հայրս սպաննուի, եւ որբեւարի մնաս, եւ ես պիտի չկարողանամ պաշտպանել զքեզ»։ Խեղճ տղայ, արդէն մինչեւ ցարդ յոյժ անգթութեամբ կը վարուէին իւր հետ իւր հօրը չարութեան պատճառաւ։ Եունկ-Յունուն եւս առաւել կը նեղուէր այսպիսի վատ անձի մը կիներ լինելուն առթիւ։

Որոշեցին երթալ նոյն գիւղեր։ Ուստի Եունկ-Յունուն իւր ունեցած բոլոր գոհարեղէնքն եւ լաւագոյն զգեստուց մի բանիներն տուաւ Շինկ-Փինկի։ «Վաճառէ ասոնք» ըսաւ մայրը, «որով բաւական ստակ պիտի ունենաս մեր ճամբորդութեան բոլոր պէտքերն հոգալու»։ Եունկ-Յունուն իւր սենեակին մեկուսացաւ եւ հանգարտութեամբ իւր բոլոր հանգերձներն ծրարեց, եւ մինչդեռ գերդաստանը կ'ընթերէր, Շինկ-Փինկ առանձին ճանաչ մը հանեց այդ ծրար, ուր իւր վարձած ջորին կ'սպասէր։ Մեծ սակառներու միոյն մէջ տնական բոլոր գոնձերն ամբօրեց։ Խակոյն Եունկ-Յունուն եկաւ, առջեւէն Շինկ-Յանկ եւ ետեւէն Կոհ-Կոհն, զորո նոքա երթալու երկիւղ տուած էին անոր։ Փոքրիկն Շինկ-Յանկ սպահովապէս գրուեցաւ պարապ սակառին մէջ, յետոյ սակառներն ջորոյն հաւասարակշռութեամբ բեռուցին։ Շինկ-Փինկ թանձր վերմակ մը փոսեց բրդեղէն թամբին վրայ, ուր սակառներն կը կենային։ Ասոր վրայ նստեցուց իւր մայրը, եւ երբ ամէն կողմ հաւասարակշռուեցաւ, Շինկ-Փինկ սանձն բռնելով զստուեցան։ Զանձնալի ճամբորդութենէ մը յետոյ, բլուրներն ի վեր մագլցելով՝ եւ առունբէն տղմաշաղաղ եղած՝ հասան մէկ հեռաւոր բազար մը, ուր այլ եւ այլ կերպերով կ'ինն եւ նորա որդիքը կ'աշխատէին եւ կը գործէին ամենայն ժրջանութեամբ։ Եւ Շինկ-Փինկ հետզհետէ զինքն փողոցները համաթափ վաճառող ճանչցուց։ Իւր մայրն ըստ եղանակին այլ եւ այլ տեսակ կերակուրներ կ'եփէր, եւ Շինկ-Փինկ միշտ կանուխ ար-

Թննալով յօժարութեամբ ի վաճառ կը հանէր զանոնք : Եւ երբ անձրեւը կը հեղհեղէր եւ փողոցները ցեխային գետերու կը դառնային , մարդիկ ակամայ դուրս ելլելու չհամարձակած , կուրախանային Շինկ-Փինկի մետաղային բամբռան հնչիւնը լսելու , որով կը գիտնային թէ շուտ իւր աղնիւ կերակուրներովն պիտի երեւի : Այսպէս խոնաւ օրեր , փողոցները չոր եւ օդը պայծառ եղած օրերու ծախածին կրկնապատիւը կը ծախէր : Ուստի ինքը կը հագնէր զոյգ մը անեփ , խոզամաշկեայ , յարդալից , անջըր-թափանց կաշիներ , որ կուտային իրեն չընող խոտադէզի մը երեւոյթ , եւ գլուխը պատկուած էր անհեթեթ յարդեայ գլխարկով մը հովանոցի մեծութեամբ յորմէ անձրեւի հեղեղներն կ'հոսէին : Սոյն երեւոյթով մաքուր անօթներու վրայ դրուած եւ մոմաթով պաշտպանուած « Խաղաղ-Սիրտ » ամբողջ օրը Վէհի-Նիէնի փողոցները կը շրջէր : Իւր անօթներ ուսին վրայ խոտորնակի դրուած երկայն ցցի մը ծայրերէն կը կախուէին : Երբ իւր կերակուրներն տաք էին , զանոնք եռալու աստիճանի մէջ կը պահէր մետաղէ անօթի տակէն կախուած փոքրիկ ածուխէ կրակարանով մը : Երբ իւր վաճառքը գետին կ'իջեցունէր , տըղայք միշտ նորա շուրջը կը խռնէին կազմելով Փարիսէան անց չրջանակ մը , զի շուգիաբուզի սաներն իւրեանց հոտորտելիքն կը դրգռէին : Այսպէս ժրջան եւ բազմաբարոյ լինելով , խիստ սիրելի եղաւ եւ տարուէ տարի իւր շահերն կը բազմապատկէր :

Անգամ մը միայն ճամբորդեց իւր հայրենիքը թաղելու իւր հայրը՝ զՎոհ-Վոհ , որ յոյժ լաւագոյն կեանք մը անցուցեր էր եւ իւր ժամանակն վատնած էր փայտ ճեղքելով եւ փուռը վառելով , մինչ իւր կինը կերակուրներ կ'եփէր : Օր մը իւր տեղը թափուր , կրակը մարած , եւ Վոհ-Վոհ իւր կրակարանի տնկողնոյն վրայ պառկած , իւր խիստ լաւագոյն հանգերձները , նոր կոշիկները , նոր գլխարկն հագած , եւ գեղեցիկ ասեղնադորձեալ ծխախոտի քսակ մը լի աւմենաաղնիւ ծխախոտով , եւ աղւոր ծխափող մը իւր ընկնող դրուած օրոնք ամէն ալ ուրուականաց աշխարհը մտնելու միջոցին լաւ տպաւորութիւն ընելու յոյսերն կը տա-

ծէին : Իւր որդին Շինկ-Փինկ տարաւ զնա գերդաստանական գերեզմանատունը եւ թաղեց իւր հարց հետ : Սոյն միջոցին մինչեւ ի գերեզմանատուն ընկերացաւ Վոհ-Վոհի գաղաղին իւր նահապետական գերդաստանի անդամը որը կը պարպէին Շինկ-Վանկի պատրաստած փամփուշտներն : Բայց եւ այնպէս նորա իւր վրայ յոյժ կը կտակածէին վախնալով զի մի գուցէ պահանջէր իրենցմէ ծախուց մաս մը : Շինկ-Փինկ տեսնելով նոցա այս թերի բարեկամութիւնն , դարձաւ իւր բնակարանը առանց մէկ գիշեր իւր նախնեաց յարկին տակ ննջելու :

Խաղաղ-Սիրտը շուգեց որ իւր եղբայրը չըջիկ վաճառող մը ըլլայ : Ուստի իւր մօրը հետ յետ երկար խորհրդակցութեան որոշեցին որ Շինկ-Փինկ ըլլայ գարնանակաւն մը : Նա բարի , աշխոյժ եւ իւր մօրն ու եղբօրը հնազանդ տղայ մ'էր : Այնչափ արագ յառաջադիմեց իւր ուսման մէջ որ իւր վարժապետին կատարեալ պարճանքն եղաւ : Եւ յետ մի քանի ամաց նորա անունն Վարդապետ Արուեստից տխտղոսն առնելու հետամտոց ցանկին մէջ դնելով գաւառական քննութեան յանձնեց : Շատ մը ուսանողը ի միասին գնացին գաւառական մայրաքաղաքի մէջ եղած այդ մրցողական քննութեան :

Ուսանողաց մէջ մեծ աշխուժութիւն կը տրէր , մինչեւ որ բոլոր թղթերն գրուելով մատուցուեցան դատական քննչաց : Յետոյ նոցա մեծ խնջոյք մը տրուեցաւ : Խնջոյից մէջ շատ մը պատմութիւնք խօսուեցան , ըստ մեծի մասին ռաւակական սոսկման պատմութիւնք ըլլալով : Պատմութիւն մը պատմուեցաւ սոյն քաղաքին մօտը գտնուած մեծ պալատան մը վրայ ուր ժամանակաւ բարձրագոյն կարգի դատաւոր մը բնակած էր : Սոյն անձը ստիպուած էր իւր պաշտօնէն հրաժարիլ երկու տարի ժամանակամիջոցով իւր մօրը մահը ողբալու : Այս առանձնութեան միջոցին խնջոյքի մը մէջ թուեաւորուեցաւ նախանձորդէ մը :

Այդ տունը ուրուական հրատարակուած էր , քանզի եղած չէր որ երբէք որ այդ պալատան մէջ գիշեր մը քնանար , եւ հետեւեալ օրը իբրեւ մոլեգին լուսնոտեալ մը չ'էլէր : Ուրուական տանց նկատմամբ պատուած բոլոր հմայական դիպուածոց մէջ այդ

պալատան վրայ պատմութեամբ, թէ ինչպէս մարդիկ երկերկու եւ երեք, երեք թուով գացած էին գիշերելու Եւ-Հուսնի-Պուրի մէջ, բայց դեռ կէս գիշեր չեղած միշտ ստիպեալ էին փախչիլ, մեծ խնջոյից մը համար եղած պատրաստութեան ազդակից ծայներէն զարհուրեալ:

Բնդհանուր հրաւեր մը կարգացուեցաւ գտնելու, թէ ո՞վ է ամենաքաջն: Բոլոր ուսանողը որոնք այդ ուրուական տունը առաջուց փորձողներն կը ճանչնային, վախցան իրենք եւս փորձելէ: Բայց մեր երիտասարդ գլորցական Շինկ-Քեանկը, որ այդպիսի անտեղութեանց հաւատ չէր ընծայէր, զինքը բոլորովին պատրաստական ներկայեց այդ գիշեր քնանալ Եւ-Հուսնի-Պուրի մէջ: Սոյն որոշումը բարձրաձայն կեցցէներով ընդունուեցաւ: Իսկոյն պայմանը որոշուեցան, թէ Արեւը մարը մտնելէն ժամ ու կէս առաջ Խաղաղ-Քեանկը հանդերձ իւր վեց բարեկամօք խուզարկեն պալատը եւ Եւ-Հուսնի-Պուրի վայրերը. նաեւ անոր բոլոր սենեակներն ու պարտէզները, ստուգելու թէ չըլլայ որ նոցա մէջ պահուած ըլլայ: Արդեաւ ժամուն բարեկամք ժողովուեցան եւ մեծաձայն ծիծաղելով բոլոր վայրերն ընդնեցին: Բայց բան մը չգտան, բացի վաղեմի դատարանի մը մէջ այս ինչ չափ չղջիկներ եւ դատարիկ ախոսի մը մէջ նապաստակաց դաղթականութիւն մը: Անտարակոյս այսպիսի աշխոյժ ընկերութիւն մը երբեք այդ սրահներն ու դահլիճները չըլած չէր: Այսչափ իրական հրճուանք եւ ծիծաղներ բաւական էին զարհուրանք փախցունելու որ եւ է ուրուական ոգի: Ճիշդ արեւը մարը կը մտնէր, վեց բարեկամք դուրսի մեծ դրան մէջ գիշեր բարի մաղթեցին Շինկ-Քեանկի:

Որոշեց գիշերն անցունել «Դինկ-Յըլ» կոչուած փոքրիկ սենեկին մէջ, իրեն միակ ընկեր ունենալով զիրք մը եւ ծխափող մը: Դինկ-Յըլ էր փոքրիկ քառանկիւնի սենեակ մը, մասամբ մը զուարճալի փոքրիկ լճակի մը վրայ սիւններով կառուցեալ սոյն լճակի մէկ կողմը գեղեցիկ դաշտավայր մը կար, զէպի ջուրը առաջնորդող ճերմակ մարմարիոնէ աստիճաններով սրտեղ անցելոյն մէջ Զինական գեղեցիկ սեւին յաճախած սիրելի վայրն էր, որք աստ ինքզինքնին

կըրօսցունէին ընտանի ձկանց կեր տալով, որոնք կուգային Զինական սեւաչեայ գեղանի անկնանց ճուռողելու: Սենեկին երեք կողմանց վրայ կային քանդակագործ գեղեցիկ լուսնամուտներ: Եւ չորրորդ կողմանէ կըցուած էր տանը հետ աստիճանաց երկու կարճ փախուստներով, որոց մէջ տեղը կար երկար սպասուց կողմնասեղան մը որոյ կեդրոնը սլաքիկ գլորց մը կար, ուր փառաւորապէս կը բազմէին այժմեան անական անփոյթ չաստուածք: Սենեկին միւս զարդերն կը բաղկանային չորս գեղեցիկ քառանկիւնի սեղաններէ եւ պատին առջեւ շարուած տասը գեղեցիկ քառանկիւնի թիկնաթոռներէ, ամէն մէկ կողմը հինգ հինգ եւ աթոռներուն իւրաքանչիւրին մէջ տեղ մարգարտի փոքրիկ գաղտնիկութիւն մը կար:

Մեր գիւցաղնը սենեկին փախստեայ աստիճանաց երկու դուռները ամենայն զգուշութեամբ դոցեց, եւ բոցափայլ ճրագներն յարդ արելով սեղաններուն միոյն առաջ աթոռ մը քշեց եւ նստաւ: Հանեց իւր ծխափողը եւ ծխախոտի քսակը եւ հրահանքն ու աբեթը, եւ քիչ մը ատեն այսպէս ծխելով մեծ զուարճութիւն վայելեց, ատենէ մը յետոյ իւր գլխին յիշելով կարգաց մէկ երկու երես: Նա կրնար լսել պարսպէն դուրս ելող պահասանի հնչեցուցած եղեգան ձայնը, որ միայն ժամ ու կէս կուգէր կէս գիշեր ըլլալու: Շինկ-Քեանկը կը շարունակէր ընթերցումը: Յանկարծ զինքն իբր գիւթութեան մը աղբեղութեան տակ երկայն արթնութեան մը մէջ գտաւ: Երկու դուռները բացուեցան: Սպասաւորը կուգային խնջոյքի մը սեղաններ դնելու: Ամենաաղնիւ կերակրոց անուշահոտ բուրմունքն ստորին սրահներէ բուրել կը թուէր: Սոյն բոլոր ծայներն ու շփոթիւնը իւր շուրջը ըլլալիք մեծ խնջոյքի մը պատրաստութիւնը կը հաստատէին: Հիմա սպասաւորը իւրաքանչիւր աթոռի վրայ ծիրանի ատեղնագործեալ ծածկոցներ փռեցին: Ապա վեց կոշնական աղնուղէմ եւ խորհրդաւոր կերպարանք ներս մտան, իւրաքանչիւրն իրելով բարձրագոյն կարգի մթագոյն կարմիր կոճակն: Այն բոլոր արարողութիւնը որ ի Զինաստան մեծ խնջոյքի մը նախապատրաստութիւնն ըլլալու էին, լիովին կատարուեցան: Հուսկ յետոյ կոչ-

նականք բազմեցան իւրեանց պատշաճ չարքովն եւ սպասաւորք դրին մեր դիւցադնը սեղաններու միոյն առջեւ : Խնջոյքն սկսաւ թէյով եւ անուշեղէններով, թէյը կը հըրամցուէր ամենապննուագոյն յախճապակեայ դաւաթներով, արծաթեայ սկուտեղներով : Այերակուրներն ազնիւ եւ բոլորն ալ չինական ճաշակին յոյժ հաճելի համեղինաց երկար ցանկ մը կը շինէին, սկսեալ հաւկիթներէ, որ ճիշտ կաղամախի ծաւերէ հանուեցան, ուր հարիւրաւոր տարիներէ հետէ թաղուած էին, շնածկան թեւոց մածուածներէ, եղջերուի հաւասարապէս կախուղ նետրդներէ, մինչեւ բազմածախքնքուշ թռչնոց արգանակը :

Խնջոյից մէջ մերթ առ մերթ տաք ըմպելի՝ ամենաազնիւ գինիներն կը չռայլուէին : Վերջապէս եօթն սպասաւորք անդ երեւցան, իւրաքանչիւրն փայտեայ յոյժ փայլուն ամենազեղեցիկ արկղ մը կրելով : Արկղերն դրուեցան սպասուց կողմնասեղանին վրայ : Եւ ի տես բացուելով ի ներքուստ պատած կապուտակ եւ փայլուն կերպասով : Եւ ամէն մի արկղ կը պարունակէր ամենաթանկագին արուեստակեալ ոսկեղէն գաւաթ մը : Սոյն գաւաթներն լուստա ծաղիկ ձեւն ունէին, եւ իրենց կայքերն էին գեղեցիկ խայտաբղէտ ակաւտեայ : Գաւաթից մասնաւոր յատկութիւնն այն էր, որ երբ գինեաւ լեցուէին եւ իւրաքանչիւր կոչնական վերցունէր իւր ձեռքին մէջ ի կենդանութիւն պարպելու, սպասաւորք կը վերցունէին ակաւտեայ կայքերն, եւ եթէ գաւաթին մինչեւ յատակը չը ծծուէր, գետին չէր կրնար դրուիլ, որովհետեւ կենալու միակ դիրքն անոր բերանը կ'ըլլար : Եւ երբ այսպէս դրուէր արուեստագիտութեան սքանչելի գեղեցկութիւնը կրնար տեսնուիլ ըստ արժանւոյն :

Անեղակութեան վերջին գաւաթներն պարպուեցան եւ կոչնականք սկսան ելլել : առաջին բանը որ սպասաւորք ըրին, էր գաւաթներն իւրեանց կայքերուն յարմարեցունելով իւրաքանչիւրն իւր արկղին մէջ դնել : Գաւաթից վեցն այսպէս զգուշութեամբ դրուեցան, իսկ եօթներորդ գաւաթի միայն ակաւտեայ կայքն դրաւ սպասաւորն արկղին մէջ, եւ այն ծանրակշիռ չքեղապէս փորագրեալ ոսկեղէն գաւաթը պահեց մեր

դիւցադնի լայնարձակ թեղանեայ մէջ :

Երբ խնջոյքն ի սպառ աւարտեցաւ, ըսպասաւորք զատուեցան, դռներն գոցուեցան, եւ ամէն բան իւր առջի վիճակին դարձաւ : Շինիկ - Քեանիկ, սկսաւ զգալ թէ ի՞նչ տարօրինակ էին այս բոլոր բաները : Խնջոյից միջոցին ինքը մերթ ընդ մերթ իւր ձեռքը երկնցուցած էր դպցունելու իրեն մերձաւոր կոչնականին, բայց պարապի գացած էր : Պահապանը կրկին հնչեցուց իւր եղեգն պարսպին տակ, ժամ ինն անցեր էր, Շինիկ - Քեանիկ սկսաւ իւր աչքերն շփել նախելով սպառեալ ճրագներուն : յանկարծ զգաց իւր թեղանեայ մէջ ծանրութիւն մը : ահա՛, այն ոսկեղէն գաւաթն էր : Ճիշդ կրցաւ տեսնել անոր շողջողուն չրթանց փայլունութիւնն որ ոլորուն օձերու նման կերեւէր : Տակաւ առ տակաւ առաւօտեան լոյսն մուտ գտաւ : Եւ ահա իւր առջեւ կը բացաւայ : Ընդ գեղեցիկ ոսկեղէն գաւաթը, այնքան չքեղ եւ ծանր, որ կը վախնար անոր դպչելու : Այդ բոլոր բաներն ի՞նչ կը նշանակէին : Դռներն գոցուած էին եւ Խաղաղ - Գետը սկսաւ իւր հսկողութիւնը : Լուսնամուտները բոլորն ալ զգուշութեամբ գոցուած էին : Կը քննէր տախտակամածը — չկար այժմ հեռքերու մի նշան անգամ : Տակաւին իւր երեւակայութեան մէջ կը լսէր հեռացեալ սպասաւորաց քայլերուն արձագանքն : Եւ անդ կը կենար ամենասքանչելի քանդակագործութեան բոլոր փառացը մէջ պանծացող ոսկեղէն գաւաթը : անոր կալին վրայ փորագրեալ կը նիքներու տառերն կը ցուցունէին թէ կայսերական էր եւ հռչակաւոր կայսեր մը կը վերաբերէր : Շինիկ - Քեանիկ ինքզինքն կը ցընցէր եւ կը նեղէր, սակայն տեսիլն չէր փառաւէր : Ամրապինդ կը կենար չքեղ գաւաթը, եւ նա կը դիտէր որ եթէ գտնուի իւր ձեռքին մէջ, ի պատիժ անոր իւր զըլուսը սրտի փոխարինուի :

(Շարանակէլ)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՂՈՒՆԿԻՍՆՈՍ ԵՐԳՁԻ ԿԱՐՆԵՑԻՈՑ

(ԱԽ ԿԵՅՆԻԼԻՆ ԵՂԱՆԼԱԿԸ)

Արդեօք քեզ ի՞նչ հանդիպեցաւ. — Խնձը վերդո-
վեցար, սրբտիկ,
կարծես թէ Յովսէփի նըման — Յեգիպտոս ծախուե-
ցար, սրբտիկ:

Ա՛խ, աւա՛ղ, ցաւագար սրբտիկ,
Մի՛ լար անմըխիթար սրբտիկ,
Սերով համբերէ տա՛ր, սրբտիկ:

Ի՞նչ է ցաւդ՝ մէկ ինձ բա՛ւ, — Որ ցաւակեց ը-
լամ ես այ.
Պիւլլիւլի պէս կոծրդ տեսայ, — Հէրիք է, մաշե-
ցար սրբտիկ:

Ա՛խ, աւա՛ղ, ցաւագար սրբտիկ,
Մի՛ լար անմըխիթար սրբտիկ,
Սերով համբերէ տա՛ր, սրբտիկ:

Կեահ կուլաս՝ անշունչ կը մընաս, — Կեահ սաս-
տիկ սէր մը կ'իմանաս.
Թէզ թէզ յերկնք կը սըլանաս, — Ո՛ւմ սիրահա-
ռեցար, սրբտիկ:

Ա՛խ, աւա՛ղ, ցաւագար սրբտիկ,
Մի՛ լար անմըխիթար սրբտիկ,
Սերով համբերէ տա՛ր, սրբտիկ:

Ողբեր կ'անես տատ ֆրեւատով, — Խոր խոցուած
ես դեղուած նետով,
Աստուածածնայ խիստ կարօտով, — Լցուելով լըց-
ուեցար, սրբտիկ:

Ա՛խ, աւա՛ղ, ցաւագար սրբտիկ,
Մի՛ լար անմըխիթար սրբտիկ,
Սերով համբերէ տա՛ր, սրբտիկ:

Ատ ի՞նչ սէր է՛ր որ կըրեցիր, — Քեզ կըրակի 'մ'
մերձեցուցիր.
Ղունկիանոսն ալ հետդ երեցիր, — Երբ որ դու վառ-
ուեցար, սրբտիկ:

Ա՛խ, աւա՛ղ, ցաւագար սրբտիկ,
Մի՛ լար անմըխիթար սրբտիկ,
Սերով համբերէ տա՛ր, սրբտիկ:

ՓԱՁՄԱՎԷՊ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ

ՅՈՐԵՆԻ ԳԻՆԵ Ի Կ. ՊՈԼԻՍ

Կ. Պոլիս օրական սպառման համար 15,
000 քիլէ ցորենի կը կարօտի, որոյ 11,000ը
երկաթուղիով կը հասնի, մեծաւ մասամբ Ա-
րեւելեան Ռումէլիէ եւ մնացեալը ծովու
ճանքով: Վերջերս տեղի ունեցած անակըն-
կալ զէպքերն արմտեաց դէնրուն վրայ ազ-
դեցիկ եղան: Երկաթուղիով հասածներուն
դադարումն, ծովու ճանքով բերուածնե-
րուն փոքր քանակութիւնը աւելնալով պատ-
րաստի դտնուածին անբաւականութեան
վրայ՝ պատճառ եղաւ մէկ քիլէին վրայ 3 դր.
դնոյ բարձրացման, որ է ըսել նախնական
դնոյն 15 0/0 էն 18 0/0 ի յաւելումն:

Իրաց այս վիճակն, հնճոյ առատութեան
յաջորդելով կրկին կզգացնէ այն օգտա-
կար միջոցներ ձեռք առնելու պէտքն որ
ցաւօք սրտի շատ անգամներ խրատուած
են եւ երբէք ի դործ չեն դրուած:

Առ ի չգոյէ ցորենի, մեր ջաղացքներ
դադրեցան աշխատելէ եւ ահա ստիպեալ
Ռումելոյ, Աւստրիոյ եւ Ֆրանսայի պիտի
դիմենք երկրագործական բերքեր ստանա-
լու: Միով բանիւ օտարին պիտի վճարենք
եւ կրկին դնով, ինչ որ մենք կրնայինք ու-
նենալ մեր միջոցներով: Էնկիւրիւի մէջ ցո-
րենի քիլէն 8 դահ. է, 5 էն 6 է ի Քօնեա,
6 էն 7 ի Քէօթահեա եւ 12 էն 16 ի Պրուսա:
Բայց այժմեան փոխադրութեան միջոցնե-
րով Էնկիւրիէն մինչեւ Իզմիր 15 դահ.
ծախք կըլլայ մէկ քիլէին, Քօնեայէն 15
դահ. եւ Քէօթահեայէն ի Մուտանիա 10-
12 դրուչ. ուրեմն մեր գաւառաց ցորենն
մեզ 25-28 դր. կարժէ մէկ քիլէն եւ ահա
այս պատճառաւ ստիպեալ մեր երկրին ցո-
րենը կը թողունք ուր որ է եւ կերթանք
դրացիներու կը վճարենք դնելու համար
ինչ որ ունինք արդէն: Գալով մեր ջաղաց-
պանից, հազարաւոր ոտկիներ ծախսելէ վերջ
սորձա ստիպեալ են ձեռնունայն անդործ
մնալու:

Քիչ մը մխիթարական պիտի ըլլար եթէ
ներքին բերքն եղող ցորենի եւ ալիւրի հա-
մար 8 0/0 մաքսի տուրքն չպահանջուէր,
ինչպէս Սելանիկէ և օսմանեան նաւա-

հանգստերէ այլ օտմ. նաւահանգստաց ճամբուած ալիւրներու համար : Թերեւս թեթեւ բարեփոխում մը տեսնենք այս տեսակ կարգադրութեամբ մը :

(Ստեփաննոս Սէնէի Լրագրէն)

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

ՀԵՂՈՒԿ ՕԴ

Փարիզի Գիտական Ակադեմիոյ սեպտ. 28 ի նստին մէջ վերստին խնդրոյ նիւթ եղաւ օդոյ հեղուկացման մասին տեղի ունեցած փորձերն զոր Պ. Ս. Վրոպլէվը 15 Ապրիլ 1885 թուականաւ գրաւոր կերպիւ հաղորդած էր :

Արդէն մի քանի տարիներէ ի վեր թըթուածինն, ջրածինն, բորակածինն հեղուկ եւ մինչեւ իսկ հաստատուն վիճակի վերածել յաջողած էին բնագիտ. ջրելով հին կարծիք մը թէ այս կազմերն հեղուկացնել անկարելի էր : Այդ փորձերէն յայտնի եղաւ թէ բնագիտաց եւ տարրագիտաց անկարելի կարծածն պարզապէս առ ի չգոյ է ընտիր գործիքներու այդպէս համարուած էր : Պ. Վրոպլէվ շինած ճնշող ջրհանն, որ մինչեւ 1000 եւ աւելի մթնոլորտ ճնշում կրնայ յառաջ բերել խնդիրը լուծեց :

Այժմ գիտութեան կազմերու հեղուկացման օրէնքները կ'ուսումնասիրեն, եւ կուզեն այս հետաքոտութիւններէն հետեւցնել մարմնոյ շամանդաղներու կազմութեան եւ շարքին վրայ օրէնքներ որով նիւթին կազմութիւնն եւ բնութեան հիմնական օրէնքներու ծանօթանալու կ'օժանդակեն :

Գալով օդին հեղուկացման, այս մարմնոց մասին բաւական դժուար եղած է հեղուկացման օրէնքները գտնել, ինչու որ գիտենք թէ օդը ոչ պարզ մարմին է եւ ոչ ալ բաղադրութիւն մը, այլ թթուածի եւ բորակածին խառնուրդ մը, անհաւասար համեմատութեամբ : Եւ ըստ Պ. Վրոպլէվի օդն եւս այնպիսի օրինօք կը հեղուկանայ որպէս թէ այդ օրէնք իսկ խառնուրդ մը ըլլային օդը կազմող տարրեր կազմու հեղուկացման օրինաց :

Ամեն կազ հեղուկացման կէտ մը ունի, այսինքն ճնշման աստիճան մը կայ որ հասածին պէս կազին վիճակը կը փոխէ : Եւ ի՞նչ է օդին հեղուկացման կէտը : Թթուածինն եւ բորակածինն թեթեւ տարրերու թեամբ հեղուկացման կէտէր ունին եւ ի հարկէ, եթէ ասոնք անհատական կերպիւ զգան ճնշումն, ըստ կարգին կը հեղուկանան, որով օդին հեղուկացման կէտը ինքն եւս այս երկուքին մօտ պիտի ըլլայ :

Ըստ հեղինակին 57, մթ. 6 եւ 41 մթ, 5 ճնշում եւ -140⁰,8 եւ -145⁰ բարեխառնութիւն կրնան ընդունելի համարուիլ իբր օդին հեղուկացման կէտեր, Զարմանալին սա է թէ այդքան ցրտութեան մէջ երբ հեղուկ օդին վրայէն ճնշումն բառնանք կսկըսի ետաւ եւ չոգիանալ : Եւ այս եռացման մէջ ալ յոյժ հետաքրքրաշարժ երեւոյթ մը տեղի կ'ունենայ :

Եթէ ցրտութիւնն մինչեւ -190 ի հասնենք եւ կամ աւելի վար, ապա թողունք որ եռայ եւ չոգիանայ՝ զանի կազմող կազերն որք հեղուկ խառնուրդն են կազմած, անհաւասար կերպիւ կը չոգիանան որով խառնուրդին բարեխառնութիւնն ինքնին կը փոխուի, -191⁰, 4 էն մինչեւ -187⁰, բարձրանալով : Արդարեւ բորակածինն համար չոգիանալու աստիճանը անբաւական է թթուածինն չոգիացման որ մինչեւ -181⁰ տաքնալ կուզէ կազանալու համար :

Ալ աւելի խորը քննելով կը տեսնուի թէ հեղուկ օդն երկու տեսակ տարրեր հեղուկներէն բաղկացեալ է, որք ինչպէս յայտնի է տարրեր տեսակարար կշիւ ունենալով շիշին մէջ կը բաժնուէին, մին վարը կը կենայ եւ միւսն անոր վրայ (ինչպէս իւզ եւ ջուր) եւ այդ երկու խաւերն բաժանեալին կորածեւ բաժանմամբ : Ստորնադաս հեղուկն ըստ ծաւալոյ 21, 8 էն մինչեւ 21, 3 առ 100 թթուածին կը պարունակէ եւ վերինն 17, 3 էն 18, 7 առ 100 :

Եթէ այս փորձեր շարունակուին ի բաց առեալ տեսական արդիւնքներէ (որք ցարգ մեծ չեն) գործնական օգտակարադոյն գիտերու կրնան նպաստել : Յիշեմ երկու տեսակ գործածութիւնը զորս դիւրին է հետեւցնել հեղուկ օդի պատրաստութենէն :

Նախ, քանի որ օդը խառնուրդ է եւ ոչ բաղադրութիւն, եւ ըստ որոյ հեղուկ

օդն աւելի իբր խառնուրդ կը մաքաւի ճընշման դէմ՝ աղատութիւն գտնելու, թերեւս փորձելով փորձելով վերջապէս գտնուի միջոց մը որով հեղուկացեալ օդին բորակածինը ազատի երթայ եւ թթուածինը մնայ։ Եւ ահա՛ միջոց մը թթուածին պատրաստելու։ Թթուածինը այնպիսի կազ մ'է որոյ գործածութիւնը թէ արուեստից եւ թէ առ տնին պիտոյից համար անգին է։ Ամեն բնագէտ, ամէն տարրագէտ գիտէ այս բանը սակայն թթուածին ո՞ր գտնէ։ Տարրագիտական պատրաստութիւնն դժուարին եւ սուղ է։ Ի՞նչ կայ օդէն ածան. եւ մթնոլորտին ամբողջութիւնն առանց մաքսի եւ առանց փոխադրութեան ծախսեց կրնանք ներս առնել հեղուկացնել թթուածինը պահել եւ բորակածինն արձակել որ երթայ. բաւ է որ դիւրին միջոց ունենանք զայս ի գործ դնելու։ Եւ այս միջոցն է որ բնագէտը մեզ տալ կը թուին։

Երկրորդ եւ աւելի դիւրահասկանալի գործածութիւն մ'է ձնշեալ եւ հեղուկացեալ օդին քիչ ծաւալի մէջ, քիչ ծանրութեամբ մարդու շնչառութեան այսինքն ապրելու համար անմիջական նիւթի մը գոյութիւնը։ Ննթագրեանք թէ նեղ տեղուանք, հանքերու, գետնափորներու եւ այլ ծակ ու ծուկ տեղեր աշխատողներու համար շէշով օդ տրուի իրենց որ տալաւ առ տակաւ շոգիանայ եւ կարենան շնչել ու երկար առտեն կեալ անդ։ Ննթագրեցէք թէ թորփիլանաւեր եւ կամ ծովային պատերազմական այլ նաւեր ի հարկին կարենան խորասոյգ ըլլալ, ծովուն տակէն քալել փախչիլ կամ յարձակիլ։ Այժմ այդ բանը չեն կարող ընել ինչու որ նաւուց մէջ նաւաստիք ի՞նչ պէս շնչեն, ամբարեալ օդն շատ կ'ապականի եւ կ'ստիպուին քիչ ատենէն վեր հանել նաւն օդ առնելու եւ ասով թշնամոյն երեւալու համար։ Մինչդեռ մի քանի տակաւ հեղուկ օդ օրերով եւ շաբաթներով պիտի բաւէր իրենց։

Եւ քանի որ երեւակայելու վրայ էք, երեւակայեցէք թէ երկրթեայ ու ապակեայ հաստատուն գեղեցիկ տուններ չինուին։ Տուներ որք ամեն կողմանէ լաւ գոցուած, լաւ չիմարակուած, կարելի ըլլայ ծովուն յատակը իջեցնել։

Ի՞նչ մեծ գիւտ։ Ամառ ատեն, 30 եւ 40

աստիճան ջերմութեան ժամանակ երթալ բնակիլ այդ ընդժովեայ բնակարանաց մէջ ուր դրախտային դովութիւն կը տիրէ, կա՞յ արդեօք աւելի ախորժելի բան մը։ Բաւական է հեղուկ օդոյ պարէնն ունենալ։ Փողոցներ, թաղեր եւ գիւղեր կրնան հիմնուել սոսկապէս եւ մարդկային ազգը բաւական ճշդութեամբ ի գործ դրած կ'ըլլայ այն խօսքը թէ — «Իշխեցէ՛ք ի վերայ ձկանց ծովու եւ»։

Եւ մեր թուանց թոռներն կարգալով 19րդ դարու յառաջդիմութեանց վրայ մեր գրածներն, ցաւելով պիտի ըսեն մեզ համար.

— Ի՞նչ խեղճ մարդիկ, միայն ցամաքի վրայ բնակիլ գիտէին եւ լուսաւորութեան դադարնակէտն հասած կը համարէին գիւրերը։

Յ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱԳԻՐՆԵՐՆ

1826 տարւոյն մէջ, Պալաի հաւաքած էր երկու կիսագունտերու մէջ հրատարակուած 5168 թերթից անուններն։ Քառասուն տարի վերջ, 1866 ին, Պ. Հաթթէն երկրիս լրագրաց թիւը 12500 ի կը բարձրացնէր, այսօր Ֆէկսոն 35000 ի կը հանէ զայն։ Անգլիերէն լեզուաւ թերթերը միշտ մեծամասնութիւն ունեցած են։ Արդարեւ 1826ին, 1578 հատ էին, 1866 ին 5000 էն աւելի, եւ այսօր 16000 էն աւելի են թըւով, թէ՛ Անգլիոյ եւ թէ՛ Միացեալ Նահանգաց մէջ։

Անուրանալի է թէ լրագիրը Չինաստանի մէջ ծնունդ առած է, թէպէտեւ ոչ պաշտօնական ձեւի ներքեւ. եւ թէ որ Շանկայի Անգլիական թերթին չինարէն հրատարակութիւնն ի հաշիւ չառնուի, ուրիշ պարբերական հրատարակութիւն չկայ բոլոր չինական կայսրութեան մէջ։ Սակայն չինացիք գիտեն շատ լաւ գնահատել լրագրերն, ըստ որում լրագիր կը հրատարակեն թէ չօնկըօնկի եւ թէ Սան Ֆրանչիսքօի մէջ, այսինքն բոլոր այն երկիրներու մէջ ուր բաւական ստուար թիւ մը կը կազմեն։

Ըստ Պ. Հաթթէնի, Վենետիկի մէջ երեւցան առաջին քաղաքադիտական օրագիրները, եւ այս՝ տպագրութեան գիւտէն յառաջ: Այդ Գանձանայ Բերլէն Վենետիկի Ծերակոյտին հրամանաւ կը խմբագրուէին հանրութեան հաղորդելու համար բոլոր հետաքրքրական դէպքերը: Կերեւի թէ Ս. Մարկոսի թանգարանին մէջ դեռ կը գտնուի 1595, 1596 եւ 1597 տարեաց Գանձանայ Բերլէնու կատարեալ հաւաքածոյ մը:

Ի Ֆրանսա, լրագրութեան յառաջադիմութիւնը դանդաղ եղան: Առաջին լրագիրն, զոր այն տառն կը կոչէին Հերֆ, երեւցաւ՝ 1651 ին, եւ 1781 ին ի Փարիզ կը հրատարակուէին հազիւ երեսուն պարբերական թերթեր: Այսօր Պոթթէնի (վաճառականական տարեցոյց) 54 սիւականներն զոհուած են Փարիզի մէջ հրատարակեալ լրագրերու անուանց: Ըստ Ֆիկաուայի, այժմ կը հրատարակուին 6,800 ֆրանսերէն թերթեր: Այս թուոյն մէջ կը գտնուին Ալճերիոյ գաղթականութեանց, Պելճիքայի, Քանաւայի, Հայիթիի, Ֆրանսայի կղզոյն, Ռոմանական Զուիցէրիոյ մէջ հրատարակուած թերթերն եւ անոնք որք կը հրատարակուին օտար երկիրներ բնակող ֆրանսացիոց համար, որպէս Իսպանիայի ի Հոնոլի, Եւրոպայի Սուրհանդակն՝ ի Լոնտոն, Միացեալ Նահանգաց Սուրհանդակն՝ ի Նիւ-Եօրք եւ: Ֆրանսայի մէջ հրատարակեալ բոլոր լրագրերն ֆրանսական լեզուաւ չեն հրատարակուիր. չատեր Պալլէմ, ոմանք ալ հարաւային գաւառաց մէջ, Բուօնապարտաբարբառներով կը խմբագրուին:

Կան բաւական ձեռագիր թերթեր, որ Աթինա Հափան եւ Անգլիական Հիգիաստանի տեղական օրագիրներն. այլը գեղադրուած են, որպէս Փարիզի ֆիգալան Բիւսկիցո-Բիւսնի: Կայ թերթ մը Լա-Պա-անոն որ կոչուեալ սահմանուած է, եւ որոյ տառերն մասնաւոր գործիքի միջոցաւ դուրս ցցուած են. զրուծիւն մը՝ որոյ հեղինակն է եղած Կոյրն Լուի Պապ: Թերթին խմբագրապետն է պարոն տը Լա Սիդրան՝ նոյնպէս կոյր եւ, որոյ շնորհիւ, Լուի Պապ ամենէն շատ տարածուած լրագիրներէն մին է, թէպէտ եւ բարեբաղդաբար իւր բաժանորդաց թիւն բաւական փոքր է: Զը կայ բոլոր աշխարհի մէջ

գրագէտ կոյր որ չը փափաքի ձեռք ձգել զայն: Բաժանորդագիրն է, որքէն երեք ֆրանկ, եւ եթէ գրական եւ երաժշտական մասն ալ ուզուի, հարկ է վճարել տասն ֆրանք:

Աշխարհի ամենամեծ թերթն է Թայմ, որ իւր հրատարակման հարիւրամեակը դեռ նոր տօնեց, եւ որ կանոնաւորապէս կը հրատարակէ 5 սիւնակ պարունակող 16 էջերէ բաղկացեալ թերթ մը:

Ամենափոքր թերթն, զէթ Փարիզի ամէնօրեայ թերթերու մէջ, Եթէր-Լան Բէլն է, որ կը հրատարակուի ամէն օր չորս էջերէ բաղկացեալ, « Մասիս » ի շեծութեամբ:

Բազմաթիւ թերթեր, նոյն իսկ քաղաքական, մանաւանդ յիտալիա, ղինիպաղրեալ պատկերներ կը պարունակեն: Նիւ-Եօրքի մէջ միայն հաստատուած է ամէն օր հրատարակուող պատկերազարդ թերթ մը, որոյ անունն է Տէյլ Կաֆէ: Տասներկու տարիներ յառաջ իւր սկզբնաւորութիւնն ըրաւ, փորձելով կազմակերպել օգային ճանապարհորդութիւն մը Ալեքանդրեանին վրայէն, Ամերիկայէն յԵւրոպա:

ՄԵՏԵՕՐԱԲԱՆԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՆՏԻ ԲԵԻԵՌՈՅԻՆ ՄԱՍԵՐՈՒ ԲԱՐԵՆՍՈՒՆՈՒԹԻԻՆԸ

Ամերիկեան եւ Ռուսական գիտական պատուիրակութիւններ հետեւեալ բարեխառնութեան աստիճանները գտած են բեւեռային նահանգներու մէջ: Առաջինն Միացեալ Նահանգաց ծովային սպայ Կրիլի տեղակալին հրամանատարութեամբ Լէտի-Ֆրանքլին ծովածոցին մէջ, 81° 44' լայնութեան տակ եւ երկրորդն ի Սակաթիտ, Լէնա գետոյն ի ծով հասած կէտն (Սիպերիա):

ԱՄԻՍԲ ԷԵՏԻ-ՖՐԱՆՔԼԻՆ ՍԱԿԱՍԹԻՏ

	Ծովածոց	
Յունուար	— 390, 05 չ. — 360, 50 չ.	
Փետրուար	— 400, 05 — 370, 67	
Մարտ	— 330, 50 — 330, 35	
Ապրիլ	— 250, 30 — 240, 25	
Մայիս	— 90, 95 — 80, 90	

Յուշիս	+	00, 40	+	00, 35
Յուշիս	+	20, 80	+	50, 40
Օգոստոս	+	10, 00	+	30, 80
Սեպտեմբեր	—	90, 00	+	00, 35
Հոկտեմբեր	—	230, 70	—	140, 60
Նոյեմբեր	—	300, 70	—	260, 80
Դեկտեմբեր	—	330, 40	—	330, 40
Տրեկն միջին թիւ	—	190, 95 չ.	—	160, 90 չ.

1 էտի-Ֆրանքլին ծովածոցին բարեխառնութեան թուանշաններն 1882 եւ 1885 տարիներու միջիններն են, իսկ Սակասթիտի առաջին վեց թիւերն 1885 եւ 1884 ի կը վերաբերին, վերջին չորսն 1882 եւ 1883 տարիներու եւ յուլիսի ու օգոստոսի թիւերն 1885 ի կը վերաբերին: Այս քաղաքին մէջ ստորնագոյն բարեխառնութիւնն է 1882 սեպտեմբերէ ցուշիս 1884՝ — 52° 5' :

1 էտի-Ֆրանքլին ծովածոցին տարեկան միջին բարեխառնութեան աստիճանին չափ վար երբէք երկրագնդի եւ ոչ մի այլ կէտի վրայ տեսնուած է եւ այս դիտողութիւն հակառակ է այն տեսութեան ըստ որոյ երկրագնդի ցրտութեան բեւեռներն չեն համապատասխաներ երկրային իսկական բեւեռներու: Ջերմագոյն ամիսն յուլիսն է, ցրտագոյնն է իետրուար եւ սոյն կողմերու համար այս ընդհանուր կերպիւ ճիշդ է: 1882 իետրուար 8 ին — 52° էր, 1883 յուշիսին — 12°, ըսել է երկու տարուան մէջ 64° աստիճան խաղացած է բարեխառնութիւնն:

Մանրաչափին տարեկան միջին բարձրութիւնն է 758 հզրմ: 67. օրուան մէջ մէկ քառորդ հազարորդամեթրի չափ կը փոփոխուի այս բարձրութիւն, եւ տարին երկու անգամ (ապրիլ եւ նոյեմբեր) բարձրագոյն եւ երկու անգամ ալ (յուլիս եւ յունուար) նուազագոյն վիճակներէ կ'անցնի:

Անձրեւաչափով կը գտնուի թէ տարեկան տեղացած անձրեւն երբէք 100 հազարորդամեթր բարձրութիւն չգտաւ եւ ալ աւելի կը պակասէր ծովեզրէն հեռանալով: Մթնոլորտային հեղման այս նուազութիւնն է որ կը կարծուի թէ բեւեռնային վերնագոյն մասերու մէջ սառնամանեաց չգոյութիւնը մինչեւ Արօշէլանոսայի հարաւակողմն գետինն ամբողջապէս սառով ծածկուած է:

Սիւն է Թէ՛՛

ՀԱՅՐ ԱՅՏԸՆԵԱՆԻ

ՄԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆՆ

Այլ յիշեն ընթերցողը թէ ասկէ առաջ Մառիի մէջ հրատարակուած էր Լաֆոն-Թէնի «Շինական փանեցն Գանուբայ» դեղեցիկ առակին թարգմանութիւնն, զոր կատարած էր Տ. Յ. Գուրգէն գրաբար լեզուաւ: Բարեկամի մը միջոցաւ վեր. Հայր Արսէն Այտընեանի դիտողութիւնն խնդրուած լինելով յիշեալ թարգմանութեան վրայ, մեծանուն Բանասէրն մասնաւոր նամակի մը մէջ հետեւեալ կերպիւ գնահատած է յիշեալ աշխատութիւնն:

«Ընկալայ սիրով եւ շնորհակալութեամբ նաեւ Մառի Շարաթաթերթին թիւն, յորում եւ աղնիւ բարեկամիս Տ. Գուրգէնի «Շինական» , որուն վրայ դիտողութիւնը կը սպասուին իմ կողմանէ, — ի ցոյց չափազանց համեստութեան երկասիրողին: Այլ խնդրեմ իմ յատուկ սիրոյ ողջունիւս հաղորդել իրեն՝ ակամայ անպաշտաւ խորհրդածութիւնքս, ոչ իբրեւ լոկ խրախոյս եւ քաջալերութիւն նորին, այլ իբրեւ հընչական արձագանգ ներքին համոզման մըտացս եւ զգածման սրտիս: Եւ արդարեւ, քանի՜ սրտիղիւր, որչափ սիրովանք ճշմարիտ հայրենասէր անձին՝ տեսնել վերջապէս Ասոյեանը (թէպէտեւ հազուադիւրէս) ի հանդէս ելած ի ցոյց հաւատարմութեան Մետրոպեան անդին աւանդութեանց, դէմ յանդիման բազմաթիւ հասարակութեան մը, որ ցարդ՝ քանի՜ քաջալերութեամբ ցուրտ եւ անտարբեր, նաեւ չճանչցող, (եթէ ոչ արհամարհող ևս) եղած է ոսկեղէն առաւելութեանց նոյն Ոսկեղէն դպրոցին. — եւ ուղղութեամբ, կ'ըսեմ, այնչափ առաւել՝ որչափ որ ծանօթ եւ սիրելի բարեկամի մը գրաւորական արդասիւքն իբրեւ բարձրագոյն վիպայութիւն մը տեսնեմ՝ զնմանէ, թէ ունի՜ զգիտութիւնս բովուրց, եւ գիտէ ընտրել զբունն յանրնոյն եւ զհարապատն յանհարապատէ. եւ այն ոչ լոկ տեսականապէս այլ դործնականապէս եւս: — Եթէ գուցէ կան աստ անդ մանր դիտելիքներ ի տաղաչափական մասին, զորօրինակ չեղտի խոտոր-

մունք, կամ թերեւս վանկերու տարապայման խստութիւն եւ լոյծ իմն թուութիւն, որ ԽձԷ երեւցան, ապաքէն չեն բաւական հարապահայերէնագիտութեան փառքն աղօտացնելու :

« Կը յորդորէի զնոյն Տ. Յ. Գուրգէն (չափով թէ արձակ՝ չէ փոյթ) ուրիշ գրութիւնք կամ թարգմանութիւնք եւս ի լոյս հանել հեռագէտէ՝ ի պայծառութիւն հաւանդ գասական լեզուի որով ի վեր քան զամենայն կը պարծի Հայութիւնն, միանգամայն եւ ի յորդոր այլոց » :

Ք Ա Ղ Ո Ի Ս Ծ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

28 ՍԵՊՏԵՄԲԵՐ — 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ս Ր Տ Ա Ք Ի Ն

— 0 —

Յրանսայի Երեսփոխանական ընտրութիւնք կը շարունակեն Եւրոպիոյ ուշադրութիւնն հրաւիրել :

Աւասիկ ընտրութեանց արդիւնքն .

Հանրապետական ընտրեալք	127
Պահպանողական »	177
Համեմատական »	270

Աւելորդ չենք համարիր ամփոփել աստ Փարիզի գլխաւոր թերթերու կարծիքն, ընտրութեանց այս անակնկալ արդեանց նշկատմամբ :

Տէպա կ'ըսէ . « Առաջին դիտելի երեւոյթն է միացեալ Միապետականաց համեմատական յաղթանակն Հանրապետութեան վրայ : Դիտելի երկրորդ կէտն է ինքնակօջ Պատեհական կուսակցութեան պարտութիւնն, որ իշխանութեան վրայ էր վերջին մի քանի տարիներս. անժխտելի է նաեւ յառաջդիմութիւնն արմատական կուսակցութեան, որ կ'երեւի թէ նոր Խորհրդարանին մէջ իւր ուղած կողմը պիտի կրնայ հակեցնել մեծամասնութիւնը : Գալով ազատական Հանրապետականներուն, ամենախորին ցաւով կը նշանակենք անոնց կրած պարտութիւնները : Ձենք փորձեր առ այժմ՝ քննել թէ ինչ հետեւանք պիտի ունենան այս ընտրութիւնք Յրանսայի ճակատագրոյն վրայ :

Բայց մեզ կը թուի թէ երկիրն որ առեւարական երկրագործական տաղնապէն այնչափ նեղուած է, իւր նոր ներկայացուցիչներէն չպիտի կրնայ ստանալ ինչ որ ամեն բանէ աւելի փափաքելի է իրեն, այսինքն՝ բարեկարգութիւն երկրին մէջ, խնայողութիւն ելեւմտից, և խաղաղութիւն արտաքին յարաբերութեանց մէջ » :

Թա՛ն շատ ասուր է . « Պէտք է որ անկեղծութիւն ունենանք խոստովանելու թէ եւրէկ (հոկտ. 4) բարեբաստ որ մը չէր Հանրապետութեան համար : Միապետականաց յաջողութիւնք գեր ի վերոյ են իրենց բոլոր անկեղծութիւններէն, վիճակ մը որ երկրիւղ կրնայ ազդել արդի դրութեան բարեկամաց : Կորուսինք Նահանգներ որք վերջնապէս Հանրապետութեան դատին շահուած կը կարծուէին, ինչպէս Լանտ, Հօդ Բիրքինէ, Էօռ, Սօմ և ուրիշ շատեր : Քաղաքական ամենաբարձր արժանեաց տէր անձինք, որպէս Պ. Պ. Կոպէ, Ռիպօ, Տըվէ և Ռուվիէ յաղթութեանց Եւրոպականներէն և Արմատականներէն : Կացութիւնը ծանրապէս վտանգեալ չէ անշուշտ, և անստուգութիւն չկայ հանրապետական դրութեան ճակատագրոյն վրայ : Բայց ինչպէս անտեղի է յուսահատական աղաղակներ բառնալ, տղայամտութիւն է նաեւ անտես ընել երեկուան քուէարկութեան ամեն հանրապետական կուսակցութեանց տուած դաւն, որք չափազանց վստահութեամբ մը կարծեցին թէ անպատիժ կրնային իրարու հետ կռուիլ և զիրար գետնէ գետին զարնել հանդէպ անհաշտ թշնամոյ մը, որ ճարտարապէս գիտցաւ օգուտ քաղել իրենց բաժանումներէն : 1871էն ի վեր առաջին անգամ գոլով, Հանրապետութիւնը տեղ կորոյս Յրանսայի մէջ : Կրնանք ըսել թէ իւր ճգնաժամն անցունելու վրայ է » Թա՛ն յորդոր կը կարգայ Հանրապետականաց՝ մոռնալ իրենց ներքին գժտութիւններ և հաստատապէս դիմադրել հասարակաց թշնամոյն, Միապետութեան :

Թա՛ն, ուրիշ յօդուածի մը մէջ, Հանրապետականաց պարտութիւնը կը վերագրէ Թոնքինեան արշաւանքին յուր եղանակաւ մը գործադրման, Պ. Ժ. Ֆէրրիի նախարարութեան կրօնական աշխարհաւարութեան, և Յրանսայի մէջ տիրող առեւտրա-

կան, արուեստական և հողագործական տաղնավիճակներ, որ ընդհանուր դժգոհութիւն յառաջ բերած է : Թաւ մասնաւորապէս կը պնդէ կղերական դասուն հաւածման վրայ, որ, կ'ըսէ, ընտրողներէն բազմաց խորին դժգոհութիւն պատճառած է, և Պահպանողականաց գիրկը տարած է դանոնք :

Բէ (Նախագահ Պ. Ժ. Կրէվիթ թերթը) կ'ըսէ. «Թէեւ Հանրապետականը մեծամասնութիւն ունին միշտ նոր Երեսօրթանութեան մէջ, բայց անկարելի է ժխտել թէ հանրապետական դաշտաւորը 15 տարիէ հետէ առաջին տնգամ լինելով յետագէտ շարժում մ'ըրած է : Ծանր իրողութիւն մ'է այս, որոյ նշանակութիւնը չափազանցելու չենք, այլ որ արժանի է խորին ուշադրութեան :

Ժէ-սքէ», Բլէմանտի թերթը, կ'ըսէ. «Քիչ անգամ ընտրութիւնը այսչափ պայծառ նշանակութիւն մ'ունեցած են : Ինչպէս կրնայինք ակնկալել, անոնք դատաւարութիւն են Պատեհականութեան, և որովհետեւ Պատեհականութիւնն երկիրը կառավարեց չորս տարիներ, հանրապետական կուսակցութիւնն ալ անոր հետ կը տուժէ : Այս է զմեզ շանթահարող քուէարկութեան նշանակութիւնն : Արքայականը օգուտ քաղեցին ընդհանուր դժգոհութեանէն ուր որ Պատեհականը չէին միացած Արմատականաց հետ, որք միշտ բողբոջ եղած են Պ. Ֆերրիի աշխարհավարութեան դէմ : Ուր որ Արմատականը պայքարի մէջ մտնելու կարողութիւն ունէին, հանրապետական ընտրողք իրենց աչքն Արմատականաց վրայ դարձուցած են, և մեր ակնկալութիւններէն աւելի յաջողութիւն տուած են արմատական դատին :»

—Աթէնքէն կը հեռագրեն թէ Արքայական հրամանադիր մը զինուոց ներքեւ կը կոչէ պահեստի զօրաց երեք նոր կարգեր : Այս հրաւեր կը նկատուի իբրեւ պատասխան մը Տէրութեանց դեսպաններուն պաշտօնապէս ըրած զիտողութեանց, որք հելլեն կառավարութեան արմատաւորութիւններն ո՛ր եւ է կերպիւր փոփոխած լինել չեն թուիր : Դեսպաններուն այցելութենէն յետոյ, Պ. Տէլիեանի հեռագրեց հելլենական զործակալներուն այնպիսի հրահանգներ, որ

րոցմէ կ'երեւի թէ Յունաստան հաւանօրէն չալիսի ընդունի Պուլկարաց Միութիւնն առանց «Արեւելեան հաւասարակշռութեան վերահաստատումը» պահանջելու ինչ ինչ նոր կարգադրութեամբ :

—Պերլինէ տրուած լրոց նայելով, գերմանացի տեղակալ Շմիտ Զանգիպարի մէջ աշխարհով մը նոր հող մը եւ ընտիր նաւահանգիստ մը ստացեր է ի հաշիւ Ալպրիկեան Գերմանական Ընկերութեան, եւ ընտրահիւ այս նոր ստացման, Գերմանացի Զանգիպար նախապէս ձեռք բերած հողերը նոր արժէք մը կը ստանան :

—Անգլիական աղբիւրէ բխած հեռագրեր կը հաստատեն թէ Հապէշը անցեալ շաբթու մէջ զարկած են Քասաբլայի շուրջ համախմբեալ Սուտանացիներն ընդ հրամանօր Օման Տրիմայի : Արաբք յաղթուած են, 5000 մարդ կորուսանելով :

—Պուլկարիոյ հետ Սերպիոյ յարաբերութիւնը դէշ երեւոյթ մը ստացան, որովհետեւ սահմանադրին վրայ ձերբակալեալ սերպ զաղթականներու վրայէն երեւան ելան թուղթեր, որք կ'ապացուցանեն Սերպիոյ դէմ Պուլկարիոյ Նախարարապետ Պ. Քարապէլովի մեքենայութիւնները :

Պուլկարաց այս մեքենայութիւնը ընդհանուր զայրոյթ կը պատճառեն Սերպիոյ մէջ :

—Թայֆլ լուրեր կը ստանայ ծանուցանող թէ Ռուսիա զօրք կը համախմբէ Պեսարապիոյ մէջ :

—Բարս Անգրկաւկասէն լուրեր կը հրատարակէ, ծանուցանող թէ թուրքօ-ռուս սահմանադրին հակառակ կողմէն արշաւանքներ կը շարունակեն լինիլ ռուսական հողին վրայ, թէ այս եղելութիւնը աւելի քան յարգէ կը յաճախեն, եւ թէ համադրեստ կրող մարդիկ իսկ կը մասնակցին այս գործողութեանց : Զօրավար Տէնէդ, ռուսական հիւպատոսն ի Կարին, թէեւ ընտիր յարաբերութիւններ կը տածէ կուսակալ Մուսթաֆա փաշային հետ, բայց յիշեալ իրողութիւններն արգիլելու համար ոչինչ կրնայ եղեր ընել, շնորհիւ գործոց վիճակին : Քարս, հետեւապէս, խորհուրդ կուտայ իւր կառավարութեան, եթէ ուրիշ միջոցներ չբաւեն, խաղախներ զրկել ասպատակաց վրայ եւ դանոնք հալածել մինչեւ

խակ սահմանադրւած են անդին, առանց նայելու համազգեստներուն զորս կը կրեն եղեր այս ասպատականութեանց առաջնորդները :

— Բո՛ւժէնհակէ կը հեռագրեն թէ Ալեքսանդր Գ. Կայսրը վերջին օրերս դիւրագրգիռ եւ բարկացող բնութիւն մը ցոյց կուտայ, եւ միշտ «Ապերաստ» կ'անուանէ զԱլեքսանդր Խլխանը : Զարը Պրուսիայի Ռեյսլանտի տարածութեալ յաջորդ Բըրլինի Դուքսն առաջարկեր է յաջորդ Ալեքսանդր Խլխանին Պուլկարիոյ, յուսալով թէ Գերմանիա կը հաւանէր, քանի որ այդ կերպիւ Դուքսը մէջ տեղէն կը վերնար եւ Գերմանիոյ ներքին քաղաքականութեան մէջ այլ եւս դեր չէր ունենար, եւ Աւստրիա նմանապէս կը հաւանէր, քանի որ դուքսը շատ բարեկամներ ունի Վիէնայի Արքեպիսկոպոսի մէջ : Բայց ո՛չ Պէրլինի, ո՛չ ալ Վիէնայի դահլիճը չեն հաւանած Ալեքսանդր Խլխանի պաշտօնանկութեան առաջարկին, եւ աստի յառաջ կուգայ Զարին դժկամակութիւնն ու բարկութիւնն, որով տրամադիր չերեւիր դիւրաւ հաւանելու Պալքանեան գործոց կարգադրման համար գերմանական եւ աւստրիական կառավարութեանց առաջարկներուն :

Ն Ե Ր Ք Ի Ն

Մեծ տէրութեանց դեսպանը շարժուս մէջ վերատին ի ժողով գումարուելով, իրենց ստացած վերջին հրահանգաց համաձայն պատրաստեցին Բ. Դրան բողոքագրոյն ի պատասխան տրուելիք ծանուցադիրն, զոր իտալական դեսպանատան թարգմանն յանձնեց Արտաքին գործոց նախարար Սայիտ փաշայի :

Աւասիկ այդ կարեւոր պաշտօնագրոյն իմաստը .

Ծանուցագրոյն ընդհանուր ոճը նըպաստաւոր է Թուրքիոյ : Մեծ տէրութիւնք խստիւ կը պարսաւեն Պուլկարաց համապաշտեալան շարժումն, չընդունելով Ալեքսանդր Խլխանին աւարքը եւ հաստատելով Վեհ. Սուլթանին կառավարութեան հաշտարար եւ խա-

ղաղասիրական ընթացքը : Բայ աստի, տէրութիւնք կը յանձնարարեն Բ. Դրան յարատեւել չափաւորութեան շաղկին մէջ եւ կ'ապահովեն զնա թէ կարելի պիտի լինի արգելուլ իրենց կողմէ երաշխաւորեալ կացութեան մը խանգարումն, վերջ մը տալով Պէրլինի Դաշնագրոյն հակառակ եղող իրաց այս վիճակին : Տէրութիւնք կը յարեն թէ հաստատապէս որոշած են խաղաղութիւնը պահպանել եւ եթէ ո՛ր եւ է տէրութիւն կամենայ խանգարել զայն, պիտի կրնան արգելուլ : Միանգամայն կայս. կառավարութեան ուշագրութիւնը կը հրաւիրեն այն ազգեցութեան վրայ զոր պուլկարական շարժումը կըրնայ յառաջ բերել սահմանակից գաւառի մը վրայ :

Խոհեմութեան եւ չափաւորութեան այս խորհուրդները տալով հանդերձ, ծանուցագիրը կերպիւ իւրիք կը յայտնէ թէ՛ Տէրութիւնք չեն ընդդիմանար ո՛ր եւ է միջոցի զոր օսմանեան կայս. կառավարութիւնն յարմար դատէ ձեռք առնուլ իւր իրաւունքներն յարգել տալու համար :

Տէրութեանց այս պատասխանագրին վրայ, Բ. Դրան նախարարը յարաասովոր նիստ գումարեցան հինգշաբթի օրն եւ խորհրդակցեցան մինչեւ իրիկուն :

Տեղական թերթ մը կ'իմանայ թէ Օսմ. նախարարաց մեծամասնութիւնն Տէրութեանց այս պաշտօնագիրն իբր կտրուկ եւ բացայայտ պատասխան մը չի նկատեր, իրաց նախկին վիճակի վերահաստատման միջոցներն յայտնող : Հետեւաբար որոշուեր է հեռագրաւ նոր չըջաբերական մ'ուղղել Տէրութեանց, հրաւիրելով զանոնք որ վերջնական եւ հատուկ կերպիւ յայտնեն իրենց կարծիքն, ըստ որում այս անգամ

տոյգ կացութիւն չկրնար այլ եւս երկարիլ :

Նմանապէս կը ծանուցուի թէ՛ մեծ Տէրութեանց պատասխանին վրայ , Բ. Դուռը վերջնագիր մը պիտի ուղղէ Սղեքսանդր իշխանին , հրաւիրելով որ որոշեալ պայմանաժամի մը մէջ իւր զօրաց հետ հեռանայ Արեւելեան Բուլեղէն , և ազդարարելով որ , հակառակ պարագային՝ կայս . կառավարութիւնն իւր գերիշխան պետութիւն , պիտի հարկադրի իւր իրաւունքները զինու զօրութեամբ պաշտպանել :

Նախարարաց Խորհուրդն իւր այդ նստին մէջ զբաղեցաւ նաև Եգիպտական խնդրովն :

Հաջեալ կիմանայ թէ այս Խորհրդակցութեանց առարկայ եղեր է Եգիպտոս զրկուելիք օսմանեան պատուիրակաց խնդիրն : Պատուիրակութիւնը վեց անգամներէ պիտի բազկանայ եղեր , որոց երկուքն Սպարապետութեան կողմէ , երկուքը Մովսիս գործոց նախարարութենէն , մէկն ալ Բ. Դրան կողմէ պիտի կարգուին . այս հինգ պատուիրակաց պիտի ընկերանայ նաև քաղաքական գործակալ մը :

Պուկարիոյ իշխանն այս օրերս հեռագիր մ'ուղղելով ի Կայսերական Պալատն , յայտնած է թէ իւր կողմէ յատուկ պատուիրակ մը պիտի զրկէ ի Կ. Պոլիս եւ խընդրած է որ Վեհ . Սուլթանի կառավարութիւնը բարեհաճի բանակցութեան մտնել նորա հետ :

— Կայսերական հրովարտութեամբ՝ Լեւոն Լուսինեան Պէյ՝ անուանուած է անդամ Լըրադրական Դիւանի Արտաքին գործոց Նախարարութեան մէջ :

Լեւոն Պէյ՝ Գեր , Խորէն Սրբազանին եղբորորդին է , Փարիզ ծնած եւ դատարարական Դիւանի Արտաքին գործոց Նախարարութեան , ուր մեծ յաջողակութիւն ցուցնելով ուսմանց եւ զիտութեանց մէջ , ստացած է Դպրութեանց ու Գիտութեանց Աստիճանաւորի վկայական . բաց ի Յունա-

րէն եւ Լատինէրէն լեզուներէ՝ դիտէ քաջ Ֆրանսերէն , Անգլիարէն եւ Գերմաներէն լեզուները :

— Յառաջագոյն ծանուցեր էինք թէ Եւթական նախարարութիւնը մտադիր է ըստ առաջնոյն Սեհիճներ ընդունիլ ի վճարում յիշեալ պարտուց :

Այս լուր պաշտօնապէս ստուգուած է , եւ Եւթական նախարարութիւնն ամեն թաղերու Տիշաքներուն իմացնելով զայս նոր որոշում , հրամայած է որ ծանուցանեն ի զիւրութիւն ժողովրդեան :

Ըստ կառավարական յայտարարութեան , անհրաժեշտ չէ որ ներկայացուելիք Սիհիմներն լինին նոյն տարւոյ սէհիմներն զորս կ'ուզուի վճարել , այլ կարելի է վճարել զանոնք ո՛ր եւ է տարւոյ Սէհիմներով : Այս զիւրութիւնը կը տրուի թէ՛ այս ընթացիկ տարւոյն եւ թէ՛ նախորդ տարւոց պարտքերուն վճարման համար :

Ժողովուրդը պէտք է փութայ օգուտ քաղել այս մեծ զիւրութենէն , որոց արոց երկու երրորդը շնորհած կը լինի , զի 20 զրուանոց մէծ խիտէով մը կարելի է 60 զրուչի Սէհիմ գնել եւ 60 զրուչի պարտք վճարել : Այս վիճակ մնայուն չէ սակայն : Կառավարական թոյլտուութիւնն առժամանակեայ է , զի Սէհիմով պարտուց վճարումը պիտի ընդունուի մինչեւ 1301 տարւոյ փետրուարի վերջն , այսինքն հինգ ամիս միայն պիտի տևէ : Իսկ առաջիկայ մարտէն անդին , Սէհիմ չպիտի ընդունուի այլ եւս :

Կը լսենք թէ Մայրաքաղաքիս հայ եկեղեցիներէն միոյն 8,000 զրուչի կալուածական պարտքն՝ շնորհիւ այս թոյլտուութեան կրցած է վճարուիլ 20 կամ 26 տակով :

— Նմանական նախարարութիւնն հարիւր յիսուն հազար օսմ . ոսկւոյ փոխառութիւն մը կ'ընէր Հանգստեան Թոշակի Սնտուկի վարչութեան : Այս դումար պիտի հատուցուի 3 առ 100 տոկոսով 1302 տարւոյ ոչնարի արոց առաջին գանձումներէն :

Եւթական նախարարութիւնն շաբթուս մէջ յիսուն հազար օսմ . ոսկւոյ դումար մը գանձեց Օսմ . կայսերական Պանքայէն ի հաշիւ այդ փոխառութեան :

Կը յիշուի թէ Հանգստեան Թոշակի Սնտուկին երեք հարիւր հազար ոսկիէ աւելի դումար մը դրած է Օսմ . Պանքան :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

—o—

Կաթողիկոսական Յանձնաժողովն կը շարունակէ իւր նիստերը, ատենապետութեամբ Վսեմ. Տիգրան էֆ. Նուսուֆեանի: Հինգերորդ նիստը տեղի պիտի ունենայ այս երկուշաբթի օր:

Ս. Պատրիարք Հայրը պիտի նախագահէ վերջին նստին միայն:

— Լ.մէն. Ս. Պատրիարք Հայրն՝ ընկերակցութեամբ Պատրիարքարանի գործակատար Ֆրէնկեան Արքահամ էֆէնտիի, նախընթաց օր այցելութիւն տալով Արաքին գործոց նախարար Սայիտ փաշայի, բարի գալուստ մաղթեց եւ շնորհաւորեց Ն. Վսեմութեան պաշտօնը:

— Նրուսաղէմէն մեր ստացած մասնաւոր լրոց նայելով, Միարանական Ընդհանուր Ժողովն ձեռնարկեր է Պատրիարքական ընտրութեան նախնական գործողութեանց:

Կը կարծուի թէ չաթուս մէջ կ'աւարտին ընտրական գործողութիւնը եւ յառաջիկայ թղթաբերը կը ծանուցանէ մեզ Պատրիարքական Եօթնանուն ընտրելեաց ցանկի քուէարկութեան արդիւնքն, որ պիտի մատուցուի Ազգ. Ժողովոյն:

— Բեդրսպուրիէն կը գրեն մեզ.

Հաստատ աղբիւրներէն լուրեր են տարածուում, իբր թէ Ռուսիոյ կայսրը Հայ ուսումնարանները յանձնելու է Մակար Կաթողիկոսին, եւ յետոյ թէ, Կառավարութեան եւ Կաթողիկոսի մէջ տեղի կ'ունենան այդ առթիւ բանակցութիւններ: Այսպէս վարուելու պատճառները շատ են: Ասում են, բարձրագոյն Կառավարութիւնը այժմ համոզուած է արդէն, որ ինքը զոհ է գնացել թիւրիմացութեան Կովկասի Կառավարչապետի կողմէ:

— Ելեւմտից նոր Հոգաբարձութիւնն իւր շարժական նիստերը կ'ընէ ի Ղալաթիա, ատենապետութեամբ Ճանրմեան Մըկըրտիչ էֆէնտիի, եւ կ'ըրադի կեդրոնական տրոց վերաբերեալ եւ այլ ելմտական խնդիրներով:

— Քաղ. Ժողովոյ անդամ Պոյաճեան Յովհաննէս էֆէնտի որ Պանտրմա գնացած էր տեղւոյն ազգային գործերը կարգադրելու համար, Քաղ. Ժողովոյ վերջին նստին ներկայ գտնուելով տեղեկութիւններ հաղորդեց իւր գործառնութեանց մասին: Պոյա-

ճեան էֆէնտի Պանտրմայի մէջ առժամեայ Թաղ. Խորհուրդ մը կազմեր է, որոյ պաշտօնն է տեղւոյն ազգային գործերը վարել ցընտրութիւն Առ ջնորդի:

— Շարթուս մէջ դարձեալ նիստ ըրաւ ի Ղալաթիա, Նորատունկեան խանին մէջ, Կեդրոնական Վարժարանի բացման խնդրով զբաղող Յանձնաժողովն, յորում ներկայ էին, ի դիմաց Քաղաքական Ժողովոյ՝ Վսեմ. Գ. Նորատունկեան էֆէնտի, ի դիմաց Ռուսումնական Խորհրդոյ՝ Տըթ. Շիւմանեան էֆէնտի, ի դիմաց Ղալաթիոյ Կալուածոց Հոգաբարձութեան՝ Հաճեան Անտօն էֆէնտի, ի դիմաց Տնտեսական Խորհրդոյ՝ Մ. Ինճէեան եւ Մ. Չօպանեան էֆէնտիք, եւ ի դիմաց Կեդրոնական Վարժարանի Հոգաբարձութեան՝ Յ. Նորատունկեան եւ Յ. Թորոսեան էֆէնտիք:

Յանձնաժողովն զխաւորաբար զբաղեցաւ Վարժարանին կրթական ծրագրի քննութեամբ որ զրեթէ վերջացու:

— Հայ Հռոմէականաց Պատրիարք Գեորգի. Ազարեան Սրբազան չաթուս մէջ Կայս. Պալատն երթալով, Կայս. Երրորդ Սենեկապետ Մահմուտ պէյի միջոցաւ Վեհ. Սուլթանին մատուց գրաւոր թարգմանութիւնն այն աղօթից որք կարգացուած էին այս կիրակի օր ի Պէօյիւքտէրէ, Ս. Պողոս եկեղեցւոյն Օծման առթիւ: Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ այս մասին իւր բարձր գոհունակութիւնն արտայայտել Ն. Սըրբազնութեան, Սենեկապետ Պէյին միջոցաւ:

Նախընթաց օրն ալ, Բարձր. Մեծ-Եպարքոսի օրդին՝ Սուպհի պէյ յատկապէս Պէօյիւքտէրէ երթալով, ի բացակայութեան Ազարեան Սրբազանի, Ռթ. Արիկեան Վարդապետին յայտնեց Կայս. Կառավարութեան գոհունակութիւնն կատարուած աղօթից համար, ապա նորաչէն եկեղեցին այցելելով իւր զմայանքն յայտնեց ճարտարարուեստ շինութեանն համար:

— Մշոյ Առաջնորդ Գեոր. Գրիգորիս Եպիսկոպոս Ալէտթեան տոսօր կը մեկնի մայրաքաղաքէս, իւր պաշտօնատեղին ուղեւորելու համար:

Վ Ր Ի Պ Ա Կ

Մահի ներկայ թուոյն Պատմական յօդ-
ուածի 222ԷԻ երեսի Բ. Սիւնակի 14-15ԷԻ
տողերը պէտք է կարգաւ սապէս :

«Հաւանորէն ի Յունաց ΒΑΣΙΛΕΥΣ ան-
ուամբ յիշուածն է» :

ԸՆԴԱՐՁԱԿ

Օ Ր Ա Յ Ո Յ Յ

1886

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՁԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆՏԱՆՈՅԻ

Գին 3 Ղրուշ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ (ՍՐԱՄԵԱՆ)

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Օրացոյց եւ Գուշակութիւնը օդոց . —
Տարեգարծ Ծննդոց եւ Գահակալութեանց
Վեհապետաց . — Յանկ Օտմ. Սուլթանաց . —
Աւագանի Կայսերական պալատան . — Նա-
խարարք Բ. Դրան . — Մեծ պաշտօնատարը
մայրաքաղաքին . — Հրամանատարը բանա-
կաց . — Կուսակալը՝ Եւրոպական, Ասիա-
կան եւ Ափրիկեան նահանգաց . — Առանձ-
նաշնորհալ նահանգը . — Յատուկ կառա-
վարեալ երկիրը . — Պատրիարքունք եւ Ազ-
գապետք . — Օսմանեան գետապետք . — Դես-
պանք եւ Հիւսպատոսք օտար Տէրութեանց
ի Կ. Պոլիս . — Վիճակագրութիւն Թուրքիոյ .
— Հայազգի աստիճանաւորք եւ պաշտօն-
եայք Օսմանեան Տէրութեան . — Հայրա-
պետութիւն Հայոց . — Կեդրոնական վար-
չութիւն Հայոց Թուրքիոյ . — Ազգային Ընդհ-
ժողով . — Առաջնորդական վիճակը Պատ-
րիարքութեան Կ. Պոլսոյ . — Վիճակը երու-
սապիմայ, Կիլիկիոյ, Ալշամարայ եւ . —
Մայրաքաղաք . — Վանօրայք . — Վիճակա-
գրութիւն Կ. Պոլսոյ թաղօրէից . — Բարե-
գործական եւ կրթական հաստատութիւնք .
— Վիճակը եւ վանք ի Ռուսաստան, ի Պարս-

կաստան եւ ի Հնդկաստան . — Հայազգի աս-
տիճանաւորք եւ պաշտօնեայք Ռուսական,
Պարսկական եւ այլ եւ այլ Տէրութեանց . —
Հռովմէական Հայ հասարակութիւն . — Դա-
սաւորք Պետական վարժարանաց . — Բժիշկը
քաղաքական եւ դինուորական . — Փաստա-
բանք Օսմանեան եւ օտար դասարանաց . —
Արուեստագէտք . — Լրագիրք եւ պարբե-
րական հրատարակութիւնք զանազան տեղ-
եաց . — Պարզատոմար օրացոյց . — Վիճա-
կագրական ցուցակը համայն պետութեանց .
— Ծանուցմունք :

Կեդրոնատեղին է տպագրական Գրա-
ստունը, Կ. Պոլիս, Յակոբեան խան թիւ 14 :

ԾԱՆՈԹ. — Այս տարւածն տպագրութիւնն
որ 300 էրեւնէրս հասած է՝ նախորդ տրէնէրե-
տէլէ ընդարձակ եւ վերջի վիճակագրական տեղե-
կութիւններով ճշտացեալէ, առանց թնոյ յաւելման :

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՏԻԴՐԱՆ Յ. ՊՕԶԱՃԵԱՆ

Պօղածեան Թուարանութիւնը միշտ
մեծ ընդունելութիւն գտած է տղք.
վարժարանաց մէջ, եւ այս անգամ
եօթներորդ տպագրութիւնն հրատա-
րակուած է՝ բարեփոխեալ եւ յոյժ ճո-
խացեալ : Այս ընդարձակ Թուարա-
նութիւն, 490 էջէ բաղկացեալ, նա-
խորդ տպագրութեանց հետ բաղդատ-
մամբ կը պարունակէ շատ մը յաւե-
լումներ Մէդրական դրութեան վրայ,
Զուգակշռութեան վրայ, Կարողու-
թեանց վրայ, Տարեւորութեանց վրայ,
եւ Յառաջատուութեան վրայ, Պօղաճ-
եան Թուարանութեան ներկայ տպագ-
րութեան մէջ կան նաեւ խնամով պատ-
րաստուած քանի մը ցուցակներ՝ Նախ-
նական թուոց, Բաղադրեալ տօկոսեաց,
Տարեւորութեանց եւ նաեւ բաղում օ-
րինակներ Հաշուութացի եւ այլ գի-
տելեաց գործնական եւ առեւտրական
Թուարանութեան : Տարակոյս չունինք
թէ այս կարեւոր յաւելմամբ ճոխաց

եալ Պօղաճեան ընդարձակ թուարա-
նութիւնն յոյժ օգտակար պիտի լինի
թէ՛ ուսուցչոց և թէ՛ ուսանողաց :
Հեղինակը ջանք ըրած է՝ տեսականն
առանց զանց ընելու՝ իւր թուարանու-
թեան գործական ճիւղն ընդլայնելու
և վաճառականութեան և ամենօրեայ
կենաց պէտքերուն աւելի համապա-
տասխան ներկայացնելու : Խնդրոց
թիւն ալ աւելցուցած է , այնպէս որ
այս դասագիրքը կը պարունակէ մօտ
2,000 խնդիր : Պօղաճեան թուարանու-
թիւնը կրնայ օգտակար լինել , իւր
գիւրդուսոյց մէջմտով և գործական
մասերով , նաև առեւտրական մար-
դերու , որք միշտ պէտք ունին իրենց
ձեռաց ներքեւ ունենալ առեւտրական
թուարանութիւն մը :

Կը ծախուի , ի գին 45 դրուշ , ամեն
հայ գրավաճառաց քով :

ԸՆԴՈՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ԹՈՒՐԻՔԵՐԷՆԷ Ի ԶԱՅ

ԵՒ

ՀԱՅԵՐԷՆԷ Ի ԹՈՒՐԻ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

ԵՐԿԱՍԻՐԵԱՅ

ՄԻՋՐԱՆ ԱՔԻԿԵԱՆ

Նկատելով որ իբր 600 տարիէ ի վեր
Օսմ. Պետութեան հպատակ Հայն՝ դժբաղ-
դաբար դեռ չէ ունեցած ճոխ կամ գէթ
ճշգրիտ բառարան մը , որոյ միջոցաւ կարե-
նայ խորամուկս լինիլ Օսմ. լեզուի բոլոր
գաղտնեաց , որք մինչ ցարգ մեծ արգելք
եղած են Հայոց թուրք լեզոյն դիւրաւ ուս-
նելուն : Ուստի այսպիսի պէտք մը իմով-
սանն լրացնելու համար , ձեռնարկած եմ
մաս առ մաս ի լոյս ընծայել թրքաբա-
նութիւնը ընդարձակ Բառարան մը , որ մեր
տասնամեայ փորձառութեան արդիւնքն է
և որոյ մէջ կը գտնուին ո՛չ միայն Օսմ. լեզ-
ուի մէջ գործածական Արաբերէն և Պարս-
կերէն բառերն , այլ և համայն թուրք բա-
ռերն՝ իրենց դէմ ունենալով , հանդերձ ճոխ
և նշանաւոր օրինակօք , Բառական , Այլա-
բանական , Քերականական , Թուաբանական ,
Իրաւագիտական , Բժշկական Բնագիտա-
կան և այլ գիտական առումներն , բաց աւ-
տի յաւելած եմք բազում բառից հոմանի-
շերն և հակադիրներն :

Եւ որովհետեւ ամէն լեզուի ընդարձակ
բառարաններն իրենց թանկ գնով նիւթա-
պէս կարող անձանց միայն մատչելի կը լի-
նին , որպէս զի չընդիմք մեր ի վաղուց անտի-
ժանօթ նպատակէն , որ է՝ ապգիւս ամ ն
կարդի անհատից ծառայութիւն մը մ ու
տուցանել , ուստի ամէն գոհողութիւն յանձն
առնելով որոշած եմք ամենաչնչին գին մը
դնել մեր գործոյն , այն է՝ իւրաքանչիւր
ստուար հատորի 40 դահեկան բաժանոր-
դաց համար , իսկ 70 դահեկան բաժանորդ
չեղողներու համար :

Արդ , ամէն անոնք որք կը փափաքին
այժմէն բաժանորդ գրուիլ՝ պարտին զի-
մեւ Պոլսոյ բոլոր հայ գրավաճառաց և թըղ-
թավաճառաց , գիտնալով որ ամբողջ գործն
մինչ 4 ամիս պիտի լրանայ ամենամաքուր
տպագրութեամբ :

Սա եւս կը ծանուցուի արգոյ հասարա-
կութեան որ տպեալ օրինակներն երկու
տեսակ են , մին պարզ իսկ միւսն փայլուն
և բաց կարմիր թղթի վրայ . Այս վերջինոյն
գինը 10 զրշ միայն աւելի պիտի լինի :

Մ. ՈՐԵԿԻԱՆ

ԺԱՄԱԿՈՐԾ
ԴԷՄԷԼՎԱՃԵԱՆ

244 — ՄԱՀՄԻՏ ՓԱՇԱ ԳԼՈՒԽ — 244

30

142

ՅՐՆԲ

ԴՐԾ



Յրանայի ամենէ համ
բաւաւոր գործարաններէ
միոյն մէջ խիստ խնամք
պատրաստել տուած է նշա-
նակեալ գնով նմանը ցարգ
չտեսնուած 45 ամադիւնդը
երկայնութեամբ խիստ ձե-
ւաւոր , զարնոզ , շարաթը
մի անգամ լարուող , պատի
ժամացոյցներ : որք ընդու-
նելութեան սրահներու , սե-
նեկաց , վարժարանաց եւ
գրասենեկաց վայելելու էւ
յարմարագոյն են , և որոց
երկար , տարիներ ամենայն
կանոնաւորութեամբ բանին
կ'երաշխաւորէ :

ՆՅԵՂԵԱԼ վաճառատան
մէջ կը գտնուին նաեւ խիստ
աման գներով լաւ բանոզ
ընտիր ժամացոյցներ :

Գաւառներէ եկած յանձ-
նարարութիւնը փութով եւ
ճշգրութեամբ կը կատար-
ուին :

Արտօնատէր Կ. Ս. ԻԼԻԹԻՆՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼ Բ. ԼՐԱԳՐՈՅ